

614  
0-19



20 JUL 2010

ՍԱՐԻՏԱՐԱԿԱՆ  
ՈՂԱԿ



014  
1-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ

10-19 ԿՈ 154

# ՍԱՆԻՑԱՐԱԿԱՆ ՈՂԱԿ

Զ Ե Ռ Ն Ա Բ Կ  
Քննկելի սների ինֆարկտապահության խմբակների սանիցարական ողակների  
հրաժանաւության համար:

3-րդ ՈՒՂՂՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՍ

ՅԵՐԵՎԱՆ

1940

Այս գրքի նպատակն է ինքնապաշտպանության խմբակների սահմանադրական ողակների հրամանատարներին ոքն ոռվորեցնելու մարտիկներին ոդային հարձակման պայմաններում տուժածներին առաջին ոգնություն հասցնելու հիմնական ներակները:

Ա. Բ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Բնակելի տների և գլուխության ինքնապաշտպանության խմբակները այն մասսայական կազմակերպություններն են, վորոնք ի վիճակի յեն ամենից առաջ ոգնություն ցույց տալու հակառակային և հակաքիմիական պաշտպանության պայմաններում:

Ինքնապաշտպանության խմբակը բաղկացած է Հինգ ողակից՝ քիմիական, չրղեհաշեջ, սանիտարական, կապի և կարգապահական: Այդ ողակներից առաջն մեկն ունի իր հատուկ գերը և պարտավոր ե լավ ուստամասիրներ պաշտպանության այն միջոցներն ու միջոցառումները, վորոնց նա սահմանադրական հիմք ողային հարձակման ժամանակ:

Հատուկ պատասխանատվություն ե ընկնում սանիտարական ողակի վրա, վրը պետք ե անմիջական ողնություն ցույց տա ոդային հարձակումից առաջածներին:

Մեր սոցիալիստական պետությունը կասկած չունի իր հաղթության վերաբերյալ, յեթե թշնամին սիրտ անի հարձակվել մեզ վրա, սակայն մենք պետք ե հաղթենք «քիչ արյունով», այսինքն նվազագույնի հասցնելով մեր կորուստները: Այդ տեսակետից պաշտպանության գործին մեծ աջակցություն կարող են ցույց տալ ինքնապաշտպանության խմբակների սանիտարական ողակները: Նրանք պետք ե աշխատեն արագ ու ճշգրիտ և լավ իմաստան իրենց գործը:

Առաջին ոգնություն հասցնելու մեթոդների ուշադիր ուսումնասիրությամբ, ինչպես նաև մշտական վարժությունների միջոցով սանիտարական ողակները կարող են և պետք ե հասնեն այն բանին, վոր ամեն մի տուժող չուտափույթ կերպով անհրաժեշտ ողնություն ստանա:



2942  
40

САНИТАРНОЕ ЗВЕНО

Армгиз, Ереван, 1940



Շատ հաճախ միկրոբների թափանցելը վերքի մեջ, վոչ միայն վերքի թարախային վարակում և առաջացնում, այլ և պատճառ և գառնում որդանիզմի ընդհանուր վարակման կամ միկրոբների թույնով թունավորման, հասցելով յերեմի մահացության:

Վերքը մաքուր կարող է լինել միայն բժշկական վիրահատումների ժամանակ. իսկ այլ ձեռվ առաջացած բոլոր վերքերն ել սովորաբար սկզբում վարակված են լինում միկրոբներով: Ուստի վերքերը բուժելու հիմնական խնդիրն և հանդիսանում՝ թույլ չտալ, վոր միկրոբանիզմները թափանցեն վերքի մեջ և վերքի մեջ վերացնել միկրոբների զարդացման ու բազմացման նպաստավոր պայմանները:


## ՀԱՍԿԱՑՈՒԼՈՒԹՅՈՒՆ ՄԻԿՐՈԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միկրոբներ կամ բակտերիաներ են կոչվում բնության մեջ չափազանց տարածված, հասարակ աչքի համար անտեսանելի, միարժիշտ որդանիզմները: Կան միկրոբներ, վորոնք ողտակար են մարդու որդանիզմի համար, մյուսները հանդիսանում են մարդու առողջության կատաղի թշնամիները: Մենք կխռունք միայն վերջինների մասին:


1673 թվին հոլանդական գիտնական Անտոն վան-Լեենհուկը առաջին անգամ տեսալ նրանց անմիջականորեն իր պատրաստած գործիքի՝ միկրոսկոպի ոգնությամբ (նկ. 4): Հետազառությունները պարզեցին, վոր միկրոբները տարածված են ամենուրեք՝ ողում, հողում, ջրում, սննդի մեջ և տարբերգում են միմյանցից բնորոշ հատկություններով՝ մեծությամբ, ձեռվ, թունավորությամբ և այլն (նկ. 5):

Բակտերիաները մոտ 0,002—0,003 միլիմետր մեծությունունեն, այդ պատճառով նրանց տեսնել հաջողվում է միայն միկրոսկոպի ոլոնությամբ, վորը տալիս է մեկից յերկու հազար անգամ մեծացում: Շնորհիվ իրենց անշան մեծության՝ բակտերիաները ահազին քանակությամբ կարող են լինել շատ փոքր տարածության վրա՝ հեղուկի փոքրիկ կաթիլի մեջ, փոշու հատիկում, հացի փշրանքի կամ մի այլ ուտելիքի մեջ: 300 միլիմերդ քացախաթթվային բակտերիաները, որինակ, կը ունի շատամենը մեկ զրամ, սակայն, յեթե 30 մմ խորությամբ մեկ հեկ-

տար հողի մեջ յեղած միկրոբները հավաքվեն, նրանց քաշը կլինի մոտավորապես 400 կո:



Նկ. 4. Միկրոսկոպ



Նկ. 5. Բակտերիաները (միկրոսկոպի տակ)

Անհրաժեշտ է նկատի ունենալ բակտերիաների արագ բազմանալու հատկությունը. ամեն 20—30 րոպեն մեկ բակտերիան բաժանվում է յերկու մասի, նոր բջիջն ել իր հերթին և կիվում և այլն: Հողից և ջրից միկրոբներն անցնում են ողի մեջ, մեր բնակարանները, նստում են մեր հաղուստների, մեր մարմել մաշկի, ուտելիքների վրա և այլն:

Անգիտ մաշկը և լորձնաթաղանթը մեր մարմինը բավականաչափ պաշտպանում են միկրոբներից: Սակայն յեթե բակտերիաները մեծ քանակությամբ լնկնեն վնասված մաշկի կամ լորձնաթաղանթի վրա, նրանք կարող են հիվանդություն և մասապացնել: Միկրոբների գեմ հաջողությամբ կռվելու համար հարկավոր է առաջին հերթին մաքուր պահել հողը, չկեղուստացնել ջրամբարները, բնակելի տեղերը, հետեւ մարմնի, բերանի, հագուստի և այլնի մաքրությանը, այսինքն աշխատել այնպիսի պայմաններ ստեղծել, վոր բակտերիաները հնարավորին չափ քիչ չփական մեջ մտնեն մեր որդանիզմի հետ:

Քանի վոր անվնաս մաշկը և լորձնաթաղանթը արդելք են հանդիսանում բակտերիաների ներթափափանցմանը, ապա ուրեմն ամեն մի վերք, այսինքն մաշկի և լորձնաթաղանթի ամբողջությունը չափանիզմի հետ:

թյան խախտումը նրանց համար լայն քացված դուռ և հանդիւսնում:

Բակտերիաները վերքի մեջ անցնել կարող են նախ հենց այն առարկայի հետ, վորից առաջանում է վերքը, ըստ վորում, վերք առաջացնող առարկան վորքան ավելի յերկար ժամանակ է շփում հյուսվածքների հետ, և վորքան ավելի մեծ է վերքի մակերեսը, այնքան ավելի շատ բակտերիաներ են նոսում նրա վրա: Յերկրորդ՝ բակտերիաները կարող են վերքի մեջ թափանցել մաշկի յերեսից: Յերրորդ՝ բակտերիաները կարող են անցնել հազուստի վրայից, յերբ վիրավորող առարկան սկզբում հաղուստի միջով և անցնում: Վերջապես կամ սրաժեշտ է հիշատակել սխալ կապելու կամ սխալ խնամքի չնորհիվ վերքի մեջ բակտերիաների թափանցելը, վորը մեծ չափով բարդացնում է բուժումը: Շատ հաճախ մի փոքրիկ ճանդավածք սխալ խնամքից կեղտոտվելով՝ կարող են տեական կամ ընդհանուր ծանր հիմանդրության պատճառ դառնալ:

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՒՍ ՎԵՐՔԻ ՎԱՐԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ

Վերքի համար առանձնապես վտանգավոր են այն բակտերիաները, մորոնք առաջացնում են փայտացում (столбняк), կարմիր քամի (рожа), դաղային ֆլեգմոնա և արյան ընդհանուր վարակում:

Յերբ վերքի մեջ արկի բեկորների կամ հողով կեղտոտված սառը զենքի միջոցով փայտացման բակտերիաներ են ընկնում, նկատվում է որդանիզմի ընդհանուր վարակում բակտերիաների առքանով (թույնով): Մահը տեղի յեւ ունենում հիմանդրության ծրդ կամ 6-րդ որը, նկատվում են զղաճություններ, վորի ժամանակ լարվում են ամբողջ մարմնի մկանները, չնչառությունը և սրտի աշխատանքը կանգ են առնում: Որդանիզմում փայտացման բակտերիաների բազմացման առաջն առնելու համար, ամեն մի վիրավորվածի, յեթե վերքը կեղտոտված է հողով, անդայմանորեն պետք է հակափայտացման պատվաստի յենթարկել:

Կարմիր քամի կոչված հիմանդրությունը զարդառնում է այն դեպքում, յերբ նույնիսկ շատ փոքր ճանդավածքի մեջ վո-

րոշ տեսակի բակտերիաներ են ընկնում: Այդ դեպքում ձանդը վածքի մոտի մաշկը կարմրում է, ուռչում և ցավում: միաժամանակ մարմնի տաքությունը բարձրանում է, տենդ և առաջանանում, վոր ապացուց է, թե ամբողջ որգանիզմը բակտերիաների թույնով վարակվել է: Հիմանդրությունը յերեմն շատ յերկար և տեսում, տարածվում մաշկի մեծ մակերես, պաշանչվում է հասուկ բժշկություն, առանց վորի կարող է մաշացու լինել: Կարմիր քամին խիստ վարակիչ հիմանդրություն է, ուստի չվարակվելու համար խնամող պերսոնալը պետք է ձեռք առնի նախաղդուշացման միջոցներ:

Զափաղանց ծանր հիմանդրություն է զափային ֆլեգմոնան, վորը նույնպես առաջանում է վերքի մեջ վորուչ տեսակի միկրոբը թափանցումից, հիմանդրությունն արտահայտվում է նրանով, վոր վերքի ըրջապատի մաշկն ուռչում և կարմրականաչադրույն յերանգ ե ընդունում, նրա մեջ գաղային նյութերի կուտակման հետևանքով: Վերքից կեղաստ արնախառն հեղուկ և արտադրվում: Յեթե ժամանակին վիրահատում չի կատարված, սովորաբար վարակումը մահ է պատճառում:

Արյան ընդհանուր վարակումը տեղի յեւ ունենում այն դեպքում, յերբ բակտերիաներն ընկնում են արյան հոսանքի մեջ, այնտեղ բազմանում են և տարածվում ամբողջ մարմնի մեջ՝ տարբեր տեղերում թարախալից պալարներ առաջացնելով: Արյան ընդհանուր վարակումը սովորաբար մահարեր ե լինում կամ առաջացնում է յերկարատև և խիստ հյուծող հիմանդրություն:

Ամեն տեսակի թեկուղ և քիչ թունավոր բակտերիաները յերբ ընկնում են վերքի մեջ, նրա բուժումը յերկարացնում են:


## ՎԵՐՔԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒՄԸ ՎԱՐԱԿՈՒՄԻՑ

Վորպեսզի կանխիլի բակտերիաների մեծ քանակության թափանցումը վերքի մեջ, անհրաժեշտ է ամեն մի վերք, սկսած աննշան ճանդավածքից, պաշտպանել չփումից զանազան տարկաների և հաղուստի մասերի հետ: Այդ նպատակով վերքը ծածկում են ստերիլիզացված հիգրոսկոպիկ նյութով:

Վերքի կապելու համար գործ են ածում մաքուց բամբակ և մաուլա, վորոնք լավ ծծում են վերքից արտադրվածքը: Այդ

Նյութն ստերիլիզացվում է, անցկացնելով հատուկ ապարատով, վոր կոչվում է ավտոկլավ. այստեղ՝  $120^{\circ}$  C-ի և յերկու մըթ-նոլորտ ճնշման տակ մեկ ու կես-յերկու ժամվա ընթացքում վիրակապության նյութերի վրայից վոչնչացնում են բոլոր բակտերիաները (նկ. 6): Առաջ այդ նյութը պահում են առանձին տուփերի (բիկուերի) մեջ, վորտեղից ըստ պահանջի վերցնում են, պահպանելով խիստ նախազդուչություն, վորպեսզի այն չըկեղառուի:

Ամեն մի վերք պետք է ծածկված լինի ստերիլիզացված մարդայով, իսկ արդպիսին ըմբելու դեպքում՝ լավ լվացած և ուստի հարթուկով հարթուկած անձեռոցիկով, սրբիչով և այլն:



Նկ. 6. Ավտոկլավ

## ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱՐԸ

Արշավի ժամանակ՝ կամ տնային պայմաններում վոքը քսակությամբ ստերիլիզացված նյութ պահելու համար մշակված է նրա վրաթեթի հատուկ ձև՝ վորպես դինվորական և քաղաքացիական տիպի վիրակապական ծրարներ:




Նկ. 7. Առաջին ոգնության ծրար



Նկ. 8. Առաջին ոգնության ծրարի արտաքին պատյանի բացելը



Նկ. 9. Առաջին ոգնության ծրարի արտաքին պատյանի հանելը



Նկ. 10. Առաջին ոգնության ծրարի ոետինապատճ պատյանի բացելը

Զինվորական տիպի անհատական վիրակապական ծրարը, վոր արվում ե Կարմիր Բանակի ամեն մի մարտիկի ձեռքը, ունի յերեք պատյան (նկ. 7). արտօնքնը՝ կտավն դործվածքից, վորը բացվում ե կողերից մեկը ամրացնող թելը քաշելու (նկ. 8, 9). միջնը՝ (նկ. 10) ամուր, ռեսինապատած կտորից, վորը բաց են անում, պոկելով կողերի ռետինապատած ժապավենը, և ներսինը՝ թղթից:

Ծրարի պարունակությունն իրենից ներկայացնում է 10 սմ լայնությամբ և 10 մ. յերկարությամբ մարլայի մի վիրակապ (բինտ): Վիրակապի արտաքին ծայրին ամրացված են ստերիլիզացված բամբակից յերկու փոքրիկ բարձ մարլայով փաթաթված: Ծայրի բարձն անշարժ և ամրացված վիրակապին, իսկ մյուսը՝ առանձին ողակի միջոցով կարող է չարժվել վիրակապի վրայով: Ռազմական պայմաններում հրագենից առաջացած վերքերը հաճախ լինում են միջանցիկ և, հետեւապես, ռանենում են յերկու վիրավորված մակերես՝ մուտքի և յելքի, վորոնք հարկավոր ե խնամքով ծածկել այդ բարձերով: Բարձի արտաքին կողմը, վորից կարելի յե բռնել ձեռքով, կարված և կարմիր թելով. ներսի մաքուր կողմն անմիջականորեն դրվում և վերքի վրա: Վիրակապի վերջին պտույտն ամրացնելու համար կա անդրական քորոց (նկ. 11):



Նկ. 11. Առաջին սպառթյան ծրարի պարունակությունը՝ վիրակապ յերկու մարլայի բարձերով և անդրական քորոցը

Քաղաքացիական տիպի՝ վիրակապական ծրարը (նկ. 11ա, 11б, 11в) փաթաթված ե վոչ այնքան ամուր, վորովհետև նահետը ման ածելու համար չե: Այդպիսի ծրար կարելի յե գընել դեղատանը և պահել տնային դեղարկղում: Քաղաքացիական ծրարի միջի ստերիլիզացված նյութը խնամքով փաթաթված յերկու թղթի պատյանով: Այդ պատյանների մեջ կան 10 սմ

լայնությամբ 10 մետր մարլայի վիրակապ, վորի արտաքին ծայրին ամրացված և ստերիլիզացված բամբակից և մարլայից պատրաստած բարձ: Խաղաղ կյանքի պայմաններում հրագենի վերքերը խիստ բացառիկ յերեւղերից առաջացած միջանցիկ վերքերը խիստ բացառիկ յերեւղեր են, այդ պատճառով յերկորուր բարձի կարիք չեղացվում:

Նախ քան վերքն ստերիլիզացված նյութով ծածկելը, անհրաժեշտ է վերքի շրջապատի մաշկը մաքրել բակտերիաներից: Դրա համար քսում են յոդի լուծույթ: Իրեն՝ վերքին յոդ քըսել վոչ մի դեպքում չի թույլատրվում, վորովհետև դա ցավ ե պատճառում և մենցնում է հյուսվածքները և դրանով իսկ թույլացնում ե բակտերիաներին դիմադրելու ընդունակությունը:

Վոչ մի դեպքում չի կարելի վերքը լվանալ ջրով կամ այլ ախտահանող հեղուկով, առավել ևս ծածկել այն սարդի վոստայնով, թղթով և այլն:

Նախ քան վերքի կապելուն անցնելը անհրաժեշտ է ձեռքերը խնամքով լվանալ ոճառով, վորից հետո լավ կլինի չփել սպիրտով (կարելի յե դենատուրատով), ողիսվ կամ ողեկունով: Սյու կատարելուց հետո ձեռքերը սրբել չի հարկավոր և պետք է աշխատել վոչնչի ձեռք չտալ:

Վերքը կապողը մաքուր ձեռքերով վերցնում է ստերիլիզացված նյութը մի ուրիշի կողմից բաց արված ծրարից, աշխատելով ձեռք չկացնել այն կողմին, վորն անմիջապես պետք է դրվի վերքի վրա:

Վիրավորված մակերեսի վրա փաթաթանն ամրացնելու համար գործադրվում են տարբեր յերկարություն ու լայնություն ունեցող վիրակապեր, նայած վերքի մեծությանը և մարմնի վընաված մասի ծավալին: Մատները փաթաթելու համար հարկավոր ե վերցնել 5 սմ լայնության վիրակապ, թերը կամ վոտքերը փաթաթելու համար՝ 10 սմ լայնության, իսկ իրանի համար՝ ցանկալի յե 20 սանտիմետրանոց վիրակապ:

Քանի վոր վերքն ինքը ծածկված է ստերիլիզացված խոնավածուծ նյութով, վորպես վիրակապ կարելի յե գործադրել որինակ՝ քաթանի կամ Փլանելի կտորներ, բայց ավելի լավ է ունենալ մարլայի վիրակապ: Սրանք ավելի լավ են ընդդրկում մարմնի տուժած մասը, ավելի ելաստիկ են, թեթև և չեն արգելում ողի մուտքը դեպի վերքը:


## ՎԵՐՔԵՐ ՓԱԹԱԹԵԼԸ



Նկ. 11 ա. Քաղաքացիական տիպի  
առաջին որդության ծրաբ



Նկ. 11 բ. Ծրաբի  
պարունակությունը




Նկ. 11 ց. Ծրաբի բացելը

Վորպեսպի վիրակապն ավելի լազի կպչի մարմնին, - ամուր բոնի փաթաթանը և չթողնի նրան շարժվել, անհրաժեշտ ե ուսումնասիրել մարմնի զանազան մասերը փաթաթելու ձևերը: Վեբքը ճիշտ փաթաթելու համար վիրակապի ազան ծայրը պետք ե բռնել ձախ ձեռքում, իսկ գլխիկը՝ աջ: Վիրակապումը միշտ կատարմում ե ժամացույցի սլաքի ուղղությամբ, այսինքն ձախից աջ: Վիրակապի գլխիկը չի հարկավոր չատ հեռացնել, այլապես նա անհավասար լարվածություն կունենա: Վիրակապի ամեն մի հաջորդ շրջանը պետք ե անպայման բանի նախորդի լայնության կեսը: Վիրակապը պետք ե կապել «մեջքով» դեղի գուլու:


Յուրաքանչյուր վիրակապության սկիզբ ե ծառայում ամրացնակ պրշանաձև փաթաթումը: Վիրակապի ծայրն ամրացնելու համար բավական ե ամբողջապես մեկը մյուսի վրայով անցկացնելով վիրակապը յերկու անգամ շրջանաձև փաթաթել: Հետագայում վիրակապի ընթացքը կփոխվի համաձայն մարմնի համապատասխան մասի կառուցվածքի (նկ. 12):

Մարմնի այն մասերը, վորոնք իրենց ամբողջ յերկարությամբ համաչափ լայնություն ունեն, որինակ մասերը, հնարավորություն են տալիս պարուրած փաթաթելու, այսինքն, յերբ վիրակապի պատույտները, մեկը մյուսի կես լայնությունը ծածկելով, հետզհետե ընթանում են մարմնի փաթաթվող մասի յերկարությամբ (նկ. 13 և 14):


Իսկ յեթե հարկավոր ե լինում կապել մարմնի այն մասերը, վորոնք գնալով հաստանում են (թեր, վոտքը), ապա պարուրած փաթաթելը բավարար հետևանք չի տալիս, վորովհետև մարմնի ավելի բարակ մասերում ընկած վիրակապի յեզրերն ավելի թույլ կլինեն և դրանից ամբողջ փաթաթանը անկարգ տեսք կունենա, շուտով կթուլանա և կչարժվի: Այդպիսի գեպքերում վիրակապը փաթաթում են ծալվածքներով (նկ. 15): Յեթե վիրակապի ծալվածքները միշտ ընկնում են նույն գծի վրա, փաթաթանը հասկի տեսք ե ընդունում, այդ պատճեռով ել կոչվում է հասկած: Այդպիսի փաթաթանը փաթաթվող ամբողջ տարածության վրա ամուր կպչում ե մարմնի մակերեսին, ապահովում ե հիվանդի հանդստությունը և չի թուլանում:




Նկ. 12. Վիրակապի շրջանաձև  
ընթացքը



Նկ. 13. Վիրակապի պարուրաձև  
ընթացքը



Նկ. 14. Փաթաթումը  
մասի վրա



Նկ. 15. Վիրակապի հասկաձև  
ընթացքը

Հողերը (ուսու, ծունկը, արմունկը) կապելիս անհրաժեշտ է վորոշ չափով պահպանել նրանց շարժունությունը, միաժամանակ այնպես անելով, վոր փաթաթանը չսահճի: Դրա համար անում են, այսպես կոչված, ութանման փաթաթան: Վիրակապի ընթացքն այդ դեպքում հետեւյալն է: Յերկու-յերեք շրջանաձև կապ տալուց հետո, վորը վիրակապն ամրացնելու համար ե և սկսվում է հողից ցած կամ վեր, վիրակապը հողի վրայով դնում է դեպի նրա հակառակ ծայրը և այնուղ շրջանաձև ընթացք կատարելով, վիրակապնում ու խաչաձեվում է իր նախ-

կին ընթացքի հետ: Ընդունելով սկզբնական գրությունը, վիրակապն այստեղ նորից շրջան է կատարում, վորը, ծածկելով նախորդ շրջանաձև ընթացքի լայնության կեսը, դրանով իսկ մոտենում է հողի կենտրոնին, ապա նորից դնում է դեպի հողի հակառակ ծայրը, կրկնելով այնուղ շրջանաձև շարժումը: Այդպիսով վիրակապի ընթացքներն աստիճանաբար ծածկում են ամբողջ հողը (նկ. 16, 17, 18):




Նկ. 16. Վիրակապի ութանման  
ընթացքը




Նկ. 17. Ուսի հողի  
փաթաթոցը

Ութանման փաթաթան անելիս անհրաժեշտ է հետեւյ, վոր հողի մի ծայրից դեպի մյուսը դնացող վիրակապի յերկայնակի ընթացքների խաչաձեռումը միշտ նույն տեղը կատարվի, ամենից լավ է հողի ներքին կորության վրա: Վիրակապի վերջին ընթացքի ծայրը սովորաբար ընկնում է հողի մեջտեղը և այդպիսով փակում է մարլայից պատրաստած այդ բարդ փականքը: Այդ ձևի փաթաթանը ապահովում է հողի շարժողությունը և շատ ամուր և միում:


Յերբ հարկավոր է փաթաթել մարմնի այնպիսի աչքի ընկնող մասեր, ինչպիսին են քիթը, ծնոտը, ծոճրակը՝ գործ են ածում, այսպես կոչված, պարսանե փաթաթան: Առ 70 սանտիմետրանոց մարլա յի, վորը յերկու ծայրից յերկարությամբ կրտըլված է, իսկ մեջտեղի մասը՝ այն յերկարությամբ, ինչպիսին հարկավոր է փաթաթվող մակերեսը ծածկելու համար, թողնված է առանց կտրելու (նկ. 20, 21, 22, 23):



Նկ. 18. Փաթաթան աղբըի վրա



Նկ. 19. Փաթաթան աչքերի վրա



Նկ. 20. Պարսած փաթաթանի նյութը


Այս տասակի փաթաթան անելիս անհրաժեշտ է վիրակապի միջին ամբողջական մասը գնել վիրավոր մակերեսի վրա, վորն արգեն ծածկված է ստերիլիզացված մարլայով, իսկ ծայրերը կապել պլիտ հակառակ կողմում, հետևելով, վոր ցածի ծայրերը դեպի վեր զնան, իսկ վերինները՝ ցած, խաչաձեւով նախորդների ընթացքը: Այսպիսով, յեթե, որինակ, քիմի և փաթաթվում, ապա փաթաթանի վերի ծայրերը կմիանան վզի վրա, իսկ ցածինները՝ ծոծրակի:



Նկ. 21. Պարսած փաթաթան ծոծրակի վրա

Նկ. 22. Պարսած փաթաթան ծնոտի վրա


Նկ. 23. Պարսած փաթաթան քթի վրա



Նկ. 24. Չամբարի փաթաթան դաստակի վրա

Ծոծրակը փաթաթելու դեպքում վերին ծայրելը կժիանան  
ծնութի տակ, իսկ ցածրինելը՝ ճակատին:

Վերակազ չլինելու դեպքում ստերիլիզացված փաթաթանը  
կարելի յէ կազել յեռանկյունի կտորով՝ չամբարով (Կօսինկա),  
գորը կարող ե լինել բավարար մեծություն ունեցող վորեն  
կառրից: Դա շատ հարմար է փաթաթանն ամրացնելու և մարմ-  
նի վնասված մասի հանդիսող պահպանելու համար: (Նկ. 24,  
25, 26):



Նկ. 25. Զամբար փաթաթան արմունկի  
և նախաբազուկի վրա



Նկ. 26. Թէի կախելը չամբարի  
միջոցով

Զամբարի փաթաթաններ կարելի յէ գործադրել մարմնի  
ամենատարբեր մասերի համար:




## ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Մաշկի յուրաքանչյուր վնասվածքի հետևանքով միշտ աեղի  
յե ունենում շատ թե քիչ չափով արյունհոսություն: Արյուն-  
հոսության առաջն առնելը պակաս կարևոր ինդիր չէ, քան  
վերքը կեղտոտվելուց պահպանելը:

Արյունը որդանիզմի շատ կարևոր բաղադրիչ մասն եւ նրա  
միջոցով են բոլոր հյուսվածքները սննդանյութ ստանում և  
հյուսվածքներից նրա մեջ են անդանում փոխանակման բոլոր ար-  
տադրանքները: Արյան նույնիսկ աննշան կորուստն առաջացնում  
է արյունաբեր որդանների ուժեղացված աշխատանք, վիրոնք  
ձգառում են, վորքան կարելի յէ, չուտ լրացնել նրա պակասը:

Մեծ քանակությամբ արյան կորուստը որդանիզմը դժվարու-  
թյամբ ե տանում և նույնիսկ մահարել ե լինում: Մեծ մարդու-  
արյունը կազմում է մոտավորապես նրա մարմնի քաշի  $\frac{1}{13} - \frac{1}{14}$ -ը:  
Հետևապես 75 կգ քաշ ունեցող մարդը ունենում է մոտ 5,357 լի-  
տրը արյուն: Մեկ անգամից  $2\frac{1}{2}$  լիտր արյուն կորցնելը, ան-  
պայման, մահացու յէ լինում,  $1\frac{1}{2}$  կգ կորցնելը՝ որդանիզմի  
կողմից խիստ ծանր ե տարիլում:



Նկ. 27. Արյունատար անոթների սխեման  
1—Զախ նախախոր, 2—ձախ սրտախոր, 3—Առաս,  
վար բաժանվում է՝ բ—յենթանակային զարկերակ,  
բ—ուսային զարկերակ, ա—մերակային զարկերակ,  
բ—բակային զարկերակ, 6—ազդրային զարկերակ,  
4—ցածի սնամեջ յերակ (վեհա), 5—վերին սնամեջ մե-  
րակ, 6—աջ նախախոր, 7—աջ սրտախոր, 8—բույային  
զարկերակ, 9—բույային յերակ, Ա—բաքեր, ՊԿ—լարց,  
ԱԿ—յերիկամունի:

Արդանիզմի մեջ արյունը չարժվում է կամ խողովակների սիստեմի միջով (նկ. 27) սրտի մկանի զարկի (սրտի ձախի մասը) և, այսպես կոչված, գարկերակի պատերի հետադարձ կծկման հետևանքով: Զարկերակի պատերի կծկումից առաջացած այդ հարվածները (զարկերը) կարելի յեն նկատել մարմնի զանազան մասերում, այնտեղ, վորտեղ զարկերակները մոտենում են մարմնի մակերեսին: Այդ տեղերում ել հենց չոչափում են պուլսը, վորը ճշտորեն համապատասխանում է սրտի մկանի կծկումներին:

Այսպիսով արյունը սրտի և զարկերակային անոթների ոլտերի կծկման հետևանքով, զգալի ճնշման տակ տարածվում է մարմնի մեջ, մատակարարելով նրա բոլոր բջիջներին՝ նրանց կենսագործունեյության համար անհրաժեշտ թթվածինը և մանդատու նյութերը: Այդ արյունն ալ կարմիր դույն ունի:

Զարկերակի ամեն մի վնասվածքը արյան մեծ քանակության կորուստ և առաջացնում (նկ. 28) և յեթե ժամանակին անհրաժեշտ միջոցներ ճեղք չառնվեն, կարող են մահացու լինել: Ամեն տեսակի պատահական վնասվածքից պաշտպանիած լինելու համար ել սիրտը և խոշոր զարկերակները խորն են տեղափորված հյուսվածքների մեջ:



Նկ. 28. Զարկերակային արյունհոսություն

Զարկերակները վորքան ավելի մոտ են մարմնի մակերեսին, այնքան ավելի մանր են, մինչև մազի հաստության, այդ պատճառով ել կոչվում են մազանոթներ. կամ կապիլյարներ: Կապիլյարների մեջ արյան ճնշումն զգալիորեն պակասում է և այդ պատճառով ել մարմնի մակերեսի վնասվածքները թեև առաջացնում են արյունհոսություն, բայց արյունը ուժգին չի հռում, այլ կարծես սովունդի միջից և ծորում:

Արյունը բջիջներին թթվածին և մանդատու նյութեր տալով՝ նրանցից վերցնում է ածխաթթու և զանազան աղեր: Այդ մասնագիտների խառնուրդից և թթվածինը կորցնելու պատճառով արյունը դառնում է դորշկարմիր, ավելի մածուցիկ և կապիլ-

յարներից անցնում և յերակները (վենաները): Մանը յերակները հետղուած վոխվում են խոշորների, մինչև վոր հասնում են սրտի աջ մասին:

Սրտի աջ մասի կծկման հետևանքով արյունը վոխարվում է թոքերը՝ ածխաթթվից աղատվելու և թթվածնի նոր պաշար ստանալու համար, ներշնչված ողից: Մաքրված արյունն անցնում է սրտի ձախ մասը, նորից ամբողջ մարմնում տարածվելու համար: Այս ձեռվի և կատարվում արյան շրջանառությունը մարդու մարմնում: Յերակների վիրավորվելը կյանքի համար ավելի քիչ վտանգավոր է, քան զարկերակներինը, վորովհետեւ յերակներից արյունն ավելի դանդաղ է հռում (նկ. 29):

Արյունհոսությունը կանգնեցնելիություն միշտ հարկավոր և հաշվի առնել, թե վոր անոթն և վիրավորված: Մակերեսային վերքից քիչ արյունհոսության դեպքում բավական է վերքի վրա նեցնել փաթաթան դնել: Դրա համար ստերիլիզացված մարլան մի քանի անգամ ծալվում է և այդ բարձիկը ամուր փաթաթվում վիրակապով: Նա ծածկում է վերքը և արյունհոսությունը կանգնեցնում: Յերակից տեղի ունեցող արյունհոսության դեպքում նույնպես բավական է ճնշող փաթաթան դնելը, սակայն այդ դեպքում մարմնի վիրավորված մասը հարկավոր և ամրացնել:




Նկ. 29. Վենով արյունհոսություն

Զարկերակից արյունհոսությունը կանգնեցնելը շատ ավելի դժվար է: Դրա համար անհրաժեշտ է կարել արյան հռումները դեպի վիրավորված տեղը, սեղմելով սրտի և վերքի մեջ ընկած զարկերակի դլամավոր բունը (СТВОЛ): Սովորաբար այդ հաջողվում է անել այնտեղ, վորտեղ զարկերակները ընկած են վոսկրի պինդ մակերեսի վրա: Ուստի հարկավոր և ուսումնակրել մարդու մարմնի այն տեղերը, ուր հարմար է սեղմել զարկերակները (նկ. 30):

Յեթե արյունը հռում է այտից կամ շրթունքից, կարելի յեն կանգնեցնել սեղմելով ցածի ծնոտի զարկերակը ծնոտի մեջտեղում, վորքը սեղանատամի արմատի մոտ, իհարկե համապատասխան կողմում (նկ. 31):

Դլիսի վրա յեղած վերքից արյունհոսությունը կանգնեց-  
նելու համար անհրաժեշտ է սեղմել ականջի տաղինի քունքի  
դարկերակը (նկ. 32):



Նկ. 30. Գլխավոր զարկերակների հնարավոր ճնշման  
սեղմբը

Թևատակից՝ (անութից) արյունհոսությունը կանգնեցնե-  
լու համար կարելի յէ սեղմել անրակի տակ դտնվող զարկերա-  
կը առաջին կողոսկրի մոտի փոսում։ Դրա համար պետք է  
ձեռքը դնել հիվանդի ուսին, այնպես, վոր չորս մատն ընկնեն  
մեջքի կողմը, իսկ մեծ մատը մանի անրակի վերը դտնվող փո-


սը և խիստ ճնշման տակ մեծ մատով սեղմել մոտավորապէս ան-  
բակի մեջտեղում գտնվող զարկերակը։



Նկ. 31. Ենասի զարկերակը  
սեղմելը



Նկ. 32. Քունքի զարկերակը  
սեղմելը



Նկ. 33. Ուսի զարկերակը  
սեղմելը

Նկ. 34. Ազդրի զարկերակը  
սեղմելը

Բաղուկի զարկերակից արյունհոսությունը կանգնեցնելու  
համար կարելի յէ սեղմել թևի տակի զարկերակը ուսի հողին։

Դամար բարեակի ամուր գլան են դնում և ամուր սեղմում թևատակի փոսում:


Նախաբաղուկի և ուսի ցածի մասի զարկերակից արյաւն-հոսությունը կանդնեցնելու համար հարկավոր ե բաղստիկ զարկերակը սեղմել վռալրին, վորի համար ուսի ներսի կողմից դեպի դուրս են ձգում մի խումբ ծալվող մկաններ և, մնանելով զարկերակի հարվածները զբալիորեն նկատվող տեղը (մոտավորապես բաղուկի յերկարության մեջտեղում), ամուր սեղմում են այն (նկ. 33):

Վոտքից արյունհոսությունը կանդնեցնելու համար ազդ-բային զարկերակը սեղմում են վոսկրին աճուկի ծալի մեջտե-դում: Հարկավոր ե սեղմել կամ յերկու ձեռքով, կամ մեկ ձեռքով բռնել, իսկ մյուսի մատներով սեղմել առաջինը՝ մնչումը ամելացնելու համար (նկ. 34):

Սակայն արյունատար զարկերակը յերկար սեղմել հնարա-վոր չե— ձեռքերը շուտ հոգնում են: Այդ պատճառով հարկա-վոր ե հիվանդին վորքան կարելի յե շուտ տեղափոխել բուժա-կան հիմնարկ, ուր հնարավոր և ամելի հուսալի միջոցով կանդնեցնել արյունհոսությունը:


Վորպեսդի յերկարատե տեղափոխության ժամանակ վերջա-վորության զարկերակը յերկար ժամանակ սեղմած մնա, դոր-ձադրում են ուտինե սեղման (այս) (նկ. 35):

Կապը դնում են վերքի և սրտի մեջտեղը: Սեղմանը (ժգուտը) դնելու հարմար տե-ղեր են համարվում՝ վերին վեր-ջափորության վրա՝ թեր, ցածի վերջավորության վրա՝ ազգը: Նախաբաղկի կամ սրունքի վրա սեղման (ժգուտ) դնել չի կարե-լի, վորովհետեւ այստեղ յերկու վոսկոր կա, և զարկերակները անցնում են նրանց միջով: Զարկերակների ալգոխի զասա-վորությունը դժվարացնում ե այդ տեղում նրանց ամուր սեղ-մումը սեղմանով (ժգուտով):



Նկ. 35. Ռետինե սեղման (ժգուտ)

Սեղմանը կամ վոլորանը (закрутка) հարկավոր ե դնել հաղուստի վրայից կամ այն տեղը, ուր դրվելու յե սեղմանը, նախ պետք ե փաթաթել: Դա մաշկի յերեաը դահպանում ե վը-նասվածքներից (նկ. 35ա և 35б):



Նկ. 35 ա. Թեկի վրա սեղման դնելը  
նախապես փաթաթելուց հետո  
(1-ըն մոմենտ)

Նկ. 35 բ. Թեկի վրա սեղման դնելը  
նախապես փաթաթելուց հետո  
(2-ըն մոմենտ)

Ռետինե սեղմանը իրենից ներկայացնում է մոտ մեկ մետր յերկարության ամուր առածկական խողովակի: Խողովակի ծայ-րերին մի կողմից ամրացված ե մետաղյա կեռիկ, մյուս կողմից՝ փոքրիկ շղթա, վորը սեղմանն ամրացնելու համար ե: Սեղմա-նը դրվում է (նկ. 36) հետեյալ ձեռվ. բռնում են սեղմանը մեջտեղից և, մի փոքր ձգելով, նրանով փաթաթում են վերջա-




Նկ. 36. Ռետինե սեղմանով կապելը

վարությունը. Հետագա պառայտները կատարում են ուղիղ առաջինի մոտ, այնպես, վոր նրանք իրար կպէճլով ճնշող լայն մակերես կազմեն: Սեղմանի ծայրերն ամուր միացնում են իրար կեռիկի և շղթայի միջոցով:

Կտորից վոլորան-կապիչ (բինտ-закрутка) դորձաղրելու դեպքում (նկ. 37, 37a, 37b, 37c, 38 և 38a) վարկում են հետեւյալ ձևով. վոլորանի գլխի յերկտակ մասը դնում են վերջան՝ վորության վրա, կապիչի ծայրն անց են կացնում ճարմանդի (որյակ) միջով և հնարավորին չափ պինդ ամրացնում, ապա յերկրորդ ձողով ժամավենը վոլորում են այնքան, մինչև վոր դարկերակը ամուր սեղմվի վոսկրին, վորից հետո արյունհոսությունն անմիջապես դադարում է: Զողը վերջին դիրքով ամրացնում են վերջավորությանը վոլորան-կապիչի ծայրով:




Նկ. 37. Կտորից պատրաստած վոլորան-կապիչ




Նկ. 37 а. Վոլորան-կապիչի դորձաղրումը  
(1-ին մոմենտ)

Սեղման կամ վոլորան-կապիչ ըլինելու դեպքում կարելի յետպիսին պատրաստել անմիջապես (վիրակաղղից, թաշկինակից, պարանից և այլն): Այդ դեպքում վերջավորության վրա դրված փափուկ կտորը փաթաթում են պատրաստած վոլորանով այնպես, վոր սա ողակաձև պատի վերջավորությունը: Վո-


լորանի ողակը ոլետք և փաթաթել վոչ չառ ամուր, այնպես, վոր չորս մատը աղատ ներս սահեն: Ապա վոլորանի տակ ձող են մտցնում, վորը վոլորելով կազն ամրացնում են, մինչև վոր դարկերակը լրիվ սեղմվի:




Նկ. 37 բ. Վոլորան-կապիչի դորձաղրումը (2-րդ մոմենտ)



Նկ. 37 ս. Վոլորան-կապիչի դորձաղրումը (3-րդ մոմենտ)



Նկ. 38. Վոլորան-կապիչով ազդը կապելը



Նկ. 38 ա. Վոլորան-կապիչով թեր կապելը

Սեղմանը կամ վոլորան-կապիչը միանդամայն զաղարեցնում են արյան հոսանքը գեպի մարմնի վիրավորված մասը։ Արյան միջոցով ստացվող կենսական անհրաժեշտ նյութերից այդ ձևով զրկվելը հյուսվածքների համար կորստարեր հետևանք ե ռունենում։ այդ պատճառով սեղմանը կամ վոլորան-կապիչը 2 ժամից ավելի պահել չի կարելի, հակառակ դեպքում կարող ե հյուսվածքների անդայացում առաջանալ (նկ. 39)։




Նկ. 39. Անզգայացում 2½ ժամ կապիչով սեղմելուց հետո

Եղման կամ վոլորան դործաղբելու դեպքում հարկավոր են չեղել կապելու ժամանակը։ Նշումը ցանկալի յէ կատարել հենց ուղղակի փաթաթանի վրա, վորովհետեւ թղթի կտորը միշտ կարող ե կորչել։ Այդ միջոցառումն անհրաժեշտ ե նրա համար, վորպեսզի գլխավոր վիրակապական կայանում, ուր կարող են մեծ թվով հիվանդներ լինել, սեղմանը ժամանակին արձակեն։


## II. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՍԿՈՐՆԵՐԸ ԶԱՐԴՎԵԼՈՒ ՑԵՎ ԿՈՏՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Շատ հաճախ ծեծված, պատռած և ջարդված վերքերը բարդանում են կմախքի նրանց մոտ յեղած վոսկորների ամբողջության խախտումով, այն ե՝ վոսկորների կոտրվելով կամ նույնիսկ փշվելով։



Նկ. 40. Բաց կոտրվածք

Բաց վերքի դեպքում, յերբ այնտեղից դուրս են ցցվել կոտրված վոսկորի ծայրերը, կոտրվածքը համարվում ե բայց (նկ. 40)։ Դա կոտրվածքի ամենանձանը տեսակն ե, վորովհետեւ մեր մարմնի և հաղուստի վրայի կեզուը, նրա հետ նաև բակտերիաները թափանցում են մարմնի խորքը չնշաված։ Հյուսվածքների մեջ։ Ուժեղ հարվածից կամ ընկնելուց առաջացած վոսկորների կոտրվածքն՝ առանց արտաքին ծածկոցի ամբողջության խախտման— կոչվում ե փակ (նկ. 41)։



Նկ. 41. Փակ կոտրվածք

Հնարավոր են այնպիսի դեպքեր, յերբ հարվածից վոսկորը լրիվ կոտրվածք չի ստանում, այլ միայն նրա վրա ճեղքվածք ե առաջանում։

Վոսկորի կոտրվածքի յերեք տեսակն ել ծանր վնասվածք են որդանիզմի համար, վորովհետեւ ուժեղ ցավեր են առաջացնում, տևականորեն խախտում են մարմնի համապատասխան մասի ֆունկցիաները և հաճախ առիթ են ծառայում ավելի խոր ընկած կարեւոր որդանների (արյունատար անոթների, թոքերի, լյարդի, փայծալի, գանգուղեղի) ամբողջության քայլայման։

Հիվանդի ճիշտ և հմուտ խնամքը վոչ միայն ցավերն ե թեթևացնում և նպաստում կոտրված վոսկորների արագ ապաքնմանը, այլ նաև հնարավոր ծանր բարդությունների առաջն ե առնելում։

Վոսկորների կոտրվածքների դեպքում առաջին նախարժշկական ոգնություն կանոնավոր կերպով կարելի յէ հասցնել մեր իմանալով մարդու կմախքի և վոսկորների կազմությունը։

## ԿՄԱԽՔԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Վոսկրային կմախքը մեր մարմնի հիմքն ե հանդիսանում, նա այն ամուր կարկան ե, վորի վրա պահվում են փափուկ հյուսվածքները։ Նրա ներսում են թաղնված կյանքի համար

ԱԿԱՍՈՎԿՐ

ԱՉՔԻ ԽՈՌՈՉՆԵՐ

ՎԵՐԻ ՏԱՆՏ

ՍՏՈՐՈՒ ՏԱՆՏ

ԱՆՐԱԿ

ԲԱՁԿՈՎԿՐ

ԾՈՊԿՐ

ՃԱԺԱՆՉՈՎ

ՈՎԿՐ

ՅԵՆՐԱԿԻԱՆ-

ԴԱՍԱԿ

ՄԱՏԽՈՎԿՐՆԵՐ

ԾՆԿՈՎԿՐ

ՓՈՐՔ ՎՈԼԿՐ

ՎԱՐՆԱԹՐԱՒ

ԳԱՐԵԱԴՐՈՒ

ՎՈԼԿՐ

ԳԱՆԳՈՎԿՐ

ԲՈԽՎՈՎԿՐ

ԾՈՄՐԻԿՈՎԿՐ

ԴՐՈՒՆՈՅԹ ՎՈՂՆԵՐ

ԿՐՇՈՎԿՐ

Մ.Հ.Դ.


ՄԵՇ ՎՈԼԿՐ

ՆԱԽԱՐԱՐ

ԲԱԽՈՎԿՐՆԵՐ

ՎՈՏՔԻ ՄԱՏԽԵՐ

Նկ. 42. Մարդու կմախքը



կարմոր որգանները (ուղեղը, թոքերը, սիրտը և այլն) (Նկ. 42):

Կմախքի հիմնական մասը վողնաշարն է (Նկ. 43): Նա իրենից ներկայացնում է ամբողջ իրանի հենարանը և մնացած բոլոր վրակորներն այս կամ այն կերպ միացած են նրան:

Վողնաշարը բազկացած է մի չարք վողերից, վորոնք զըրված են մեկը մյուսի վրա և սեղութեն ամբացած միմյանց հետ: Վողները միմյանց նկատմամբ քիչ շարժուն են, իսկ ամբողջ վողնաշարը կարող է թեքվել տարրեր ուղղություններով:


Ամեն մի վողնի մեջտեղը գտնվում է անցք: Վորովհետև վողները դրված են միմիանց վրա, ապա այդ անցքերը վողնաշարի ամբողջ յերկարությամբ մի ընդհանուր խողովակ են կազմում: Այս վերջինիս մեջն ե տեղավորված վողնուղեղը:

Վողնաշարի վերին յոթ վողներից բազկացած պարանոցային մասի վրա յի ամրացած զանգը, վորը կազմված է միմյանց մեջ ներաձած (օրօնական) մի քանի հարթ վուկորներից: Դանցի ներսում գտնվում է գանգուղեղը, վորը գանգի ցածում գտնվող կլոր անցքի միջոցով միանում է վողնուղեղի հետ:

Վողնաշարի կրծքի մասի 12 վողերին միացած են 12 զույգ կողոսկրներ, վորոնք բարակ, կորացած վասկորներ են, նրանց մի ծայրն ամրացած է վողերին, իսկ մյուսը, կոճիկի միջոցով միացած է կրծքուկրին կամ ավելի վեր գտնվող կողերին: Յանք յերկու կամ յերեն յերեք զույգ կողերի առջևի ծայրերն ազատ են: Կրծքավանդակի ներսում գտնվում են՝ սիրտը, թոքերը, խոռոր արյունատար անոթները:

Առաջին զույգ կողերի մասում գտնվում է, այսպես կոչված ուսային վոտին (плечевой пояс). Նրա առաջին մասը

Նկ. 43. Վողնաշարը վողնուղեղի հետ



կազմում են յերկու յերկար վոսկը՝ անբակները, իսկ հետեւ մասը՝ յերկու լայն տափակ վոսկորներ, վոր կոչվում են թիակներ: Ուսային գոտում միացող թեք կմախքը բաղկացած և բաղկոսկրից և արմունկի հողից ցած՝ նախաբաղուկի յերկու վոսկրներից, վորոնք կոչվում են ծղոսկը և ճաճանչոսկը: սրանցից ցած գալիս են նախաղաստակի հողի և մատների ֆալանդների մանր վոսկորները:

Վողնաշարի դոսկատեղի մասը, վոր բաղկացած և հինգ ամենախոշոր վողներից, հետվում և հինգ միմյանց մեջ ներածած վողներից կաղմամած մասսիվ գավակի վրա:

Դաշակին կողած և կոնքի դոտին, վորը բաղկացած և յերկու մեծ անանուն վոսկրից, վորոնք գավակի հետ միասին կաղմում են կոնքը: Կոնքի մեջ թագնված են կյանքի և բաղմացման համար կարևոր միջասեռական որգանները: Կոնքին կողքերից միանում և վոտքի կմախքը, վորը բաղկացած և մեծ խողովակած աղդոսկրից, իսկ ծնկից սկսած՝ սրունքի յերկու վոսկերից, վորոնք կոչվում են մեծ և փոքր վոլոք: Վոտքի ցածի մասին միանում են մի քանի մանր վոսկորներ: Նրանք բոլորը միասին կաղմում են վոտնաթաթը:

Վողնաշարի ամենացածի մասը կաղմում է պոչուկը, վորը բաղկացած և չորս, կամ յերեքն հինգ խիստ ձեւավոխված ծայրային վողներից: Այսպիսով մարդու մարմի ամբողջ վողնաշարը բաղկացած է 32—33. վողներից:

Կմախքի վոսկորները յերկու ձևով են միանում: Մի քանի ուր, գլխավորապես տափակ վոսկորները (գլխի, կոնքի և այլն), իրար միացած են ամուր ու անշարժ: Յերկար վոսկորները (վերջավորությունները, կողերը) միանում են իրար հողերի սիստեմի միջոցով: Այս գեպքում վոսկորների ծայրերը ծածկված են լինում կոճիկով և իրենց ձևով համապատասխանում են միշտանց:

Վորոց հողեր վոսկորներին հնարավորություն են տալիս զանագան շրջանաձև շարժումներ կատարելու (որինակ՝ ուսի կամ կոնքապերի հողերը), մյուսները սահմանափակում են վոսկորների շարժումները, թույլ տալով նրանց միայն ծալվել և միշտանց հետ անկյուն կազմել (արմունկի և ծնկի հողերը, մատների ֆալանդները): Հողերը ծածկված են ամուր հյուսվածքով, վոր կոչվում է հողերի:

Բատ կազմության մեր կմախքի վոսկորներն իրենցից ներկայացնում են վոսկրային բջիջներից բաղկացած սպունդանման մասսա, վորոնք դրսից պատած են վոսկրանյութի բարակ չերտով: Վոռկրի այդպիսի կաղմությունը, չխախտելով նրա ամբողջությունը, մեծ չափով թեթևացնում է ամբողջ կմախքի քաշը:

Զարդվածքների ժամանակ վոսկորներն սովորաբար առաջացնում են սրածայր կամ ատամնաձև յեղբերով բեկորներ, վորոնք կարող են վերավորել, այսինքն խախտել իրենց մոտ դանվող որդանների և հյուսվածքների ամբողջությունը: Առանձնապես հաճախ, վերջավորությունների ջաղվածքների ժամանակ տուժում են վոսկրին մոտ դանվադ արյունատար առողջները և նյարդային բները: Այս յերեք չպետք է մոռանալ: Ողնություն հասցնելիս հարկավոր և ծայրաստիճան զգուշություն պահպանել:

Կոտրվածքի առկայության հիմնական նշանները հետեւյալներն են.

1) ուժեղ ցավ մարմնի կոտրված մասում, վորն առանձնապես ուժեղանում է կոտրվածքի տեղը չոշափելիս:

2) կոտրվածքի տեղում ուռուցքի և յենթամաշկային արյունալցման առաջացում:

3) վերջավորության ուղիղ դիրքի և ուրվագծման փոփոխություն:

4) անորմալ շարժականություն կոտրվածքի տեղում և կոտրված վոսկրի ծայրերի շփումից առաջացած ճոճողոց:

5) ցավի հետևանքով վերջավորության աշխատանքային շարժման սահմանափակում և ամբողջ վոսկրի դիմադրության խախտում:

Փակ կոտրվածքի դեպքում կոտրված վոսկրի սուր ծայրերը կարող են վիրավորել մոտը յեղած հյուսվածքները և դուրս դաշվի տակից, փակ կոտրվածքը դարձնելով բաց:

Կոտրվածքի ժամանակ հիմնական խնդիր և հանդիսանում մարմնի տուժած մասի հանդիսատը ապահովելու համար վերացնել կոտրված վոսկրի ծայրերի շարժողությունը:

Հետագա հիվանդանոցային բուժումը նույնպես կայանում է նրանում, վոր կոտրված մասին հանդիսատ են տալիս անշարժաթաթան դնելու միջոցով:

## ՇԻՆԱՆԵՐԸ (ՊԻՒՆԻ) ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Առաջին ողնությունը հասցնելիս կոտրված վոսկրին անշարժություն են տալիս շինաներով փաթաթան կապելու միջոցով։

Շինա յեն կոչվում այն ամուռ ասարկաները, վորոնցով ողափում են վոսկրը ժամանակավորապես ամրացնելու համար։

Շինաներ կարելի յէ նախորոք պատրաստել զանազան նյութերից՝ յինթակեղեցից, ստվարաթղթից, Փաներայից, մետաղուցանցից և պահել ասնիտարական պայտասակում։ Հասակ պատրաստված շինաների բացակայության գեղքում կոտրված վոսկրը կարելի յէ ամրացնել զանազան առձեռն դժոնված նյութերով՝ փայտով, ճրակերտվ, ծղուցի սպատրաստած լարանով, սինտ վոլորած հագուստով, կամ տնային գործնծության իրերով (ձեռնախայտով, հավանցով, խողանակով և այլն)։ Ցածի վերջավորությունը կոտրվելու գեղքում, յեթե շինա պատրաստելու վորեկ հնարավորություն չկա, կարելի յէ հիվանդ վոտքը կապել առողջի հետ (նկ. 44)։




Նկ. 44. Կոտրված վոտքը առողջի հետ միասին փաթաթելը



Նկ. 45. Կոտրված վոսկրին ուղիղ դիրք տալը ձղելու միջոցով

Յուրաքանչյուր կոտրվածքի ու եպքում անհրաժեշտ ե մարմնի կոտրված մասը հաղուստից ազատել։ Դրա համար հաղուստը զգուշությամբ հանում են սկզբից առողջ մասի վրայից, առաջ հիվանդ։ Յեթե վորեկ պատճառով հաղուստը հանել չհաջար չել, այն ձեղքում են կարերի ուղղությամբ վարկածին կոտրվածքը միշտ ձեղքում են կարերի։ Այդ նպատակում կիրարից անհապահ կամ համար սանիտարական պայտասյակում դանակ է մինչեւ համար ժեռանալու հետևանքով։ Յեթե այլ չափում վոսկրը հերպով կարծացել և վոսկորների ծայրերի հարուց են սխալ միակցվել։ Վոսկորներին ուղիղ դիրք են տալիս սովորաբար յերկու մարդ, կոտրված վերջավորությունն զգաւությամբ ձգելով և այլպիսով վոսկորի ծայրերը միմյանց հանդեղ տեղափորելով (նկ. 45)։ Այդ դրությամբ ել կոտրված վերջավորությունը պահպում է մինչև վերքի փաթաթելն ավարտելը։ Յեթե վերքը բաց է լինում, պատ առաջին հերթին ծածկում են այն ստերիլիզացված նյութով (անհատական վիրակապական ծրար), վորից հետո միայն դնում են շինաները (նկ. 46)։



Նկ. 46. Շինա տախտակներից

Վորպեսպի հիվանդը չանչանդստանա և շինայի ու ցածր գունդած վոսկորի միջն փափուկ հրավաժքների ողասկելախոց չառաջանա, շինան կամ մարմնի առւժած մասը փաթաթում են վորեկ փափուկ կտորով, ամենից լավ և բամբակով, իսկ յեթե ձեռքի տակ բամբակ չկա, սրբիչով, հաղուստի մասերով և այլք։ Տակդիրը (подкладка) սուսնձնապես ինամքով պետք է պատրաստել, յեթե շինան գրվում ե, այնպիսի տեղ, վորեղ մկանային շերաը թույլ ե արտահայտված, որինակ, արմունկի կամ ծնկան հողի վոսկրի մոտ և այլն։

Վերք լինելու դեպքում շինաները պետք եւ այնպես դրվեն, վոր վիրավորված տեղին չկպէն։ Այդ դեպքում շինաները չեն ճնշի վերքի վրա և չեն խանգարի արյան ըրջանառությանը։

Կոտրված վոսկրի անշարժությունն ասուհովվում եւ այն դեպքում, յերբ շինաները իրենց յերկարությամբ բռնում են այն յերկու հարևան հողերը, վորոնց մեջ գտնվում եւ կոտրված վոսկրը։ Յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ եւ պարզ կերպով պատկերացնել, թե ինչպես կապել անշարժ մատթաթանը։

Անրակը կոտրվելու դեպքում հարկավոր եւ անութի մեջ մի գունդ բամբակ դնել, թեր ծալել արմունկի հողի մոտ և վոսկրը ամուր սեղմել իրանին։ Կոտրված անրակի վրա վերեկց դրվում եւ մարլայից և բամբակից ամուր բարձ և ամբողջ թեր պինդ փաթաթվում եւ իրանին կամ ամրացվում յերկու չամբարներով։

Բազուկոսկրը կոտրվելու դեպքում դործագրվում են յերկու շինաներ, արտաքին՝ յերկարը գրվում եւ ուսի հողից սկսած մինչեւ արմունկը, մյուսը՝ ավելի կարճը՝ անութի խորշից մինչեւ նախարազուկը ծալված վիճակում։ Ներքին շինայի ծայրերը փաթաթում են բամբակով, վորպեսզի նրանք անութի խորշի և նախարազուկի փափուկ հյուսվածքները չեն։ Դրանից հետո շինաներն ամուր փաթաթում են վոսկրին, իսկ նախարազուկը կապում են չամբարով։

Նախարագի վոսկրները կոտրվելու դեպքում շինաները դրվում են անմիջապես նախարազուկի վրա, ընդդրելով նաև դաստակը։ Այդ ձեռք փաթաթված նախարազուկը նույնութեա կապում եւ չամբարով։

Սրունիքի վոսկրները կոտրվելու դեպքում շինաներն իրենց յերկարությամբ պետք եւ հասնեն ծնկան հողին մինչեւ սրունիքի և թաթի միջև ընկած հողը, վերացնելով այդպիսով յերկու հողերի մեջ ևս վորեն շարժում։

Ամենից բարդ ու դժվար եւ ազդրը կոտրվելու դեպքում փաթաթան կապելը։ Յածի վերջավորության ծանրությունը պահանջում եւ հատկապես ուշադիր ամրացում։

Արտաքին շինան պետք եւ ընդդրեկի թաթից մինչեւ անութի խոռոչը ընկած տարածությունը, ներսի կողմից՝ թաթից մինչեւ աճուկի շրջանը։ Այդ յերկու շինաները, սակայն, բավական չեն, վորովհետեւ կոնքաղղի հողը հնարավորություն եւ տալիս վեր-

ջավորությունը շարժել վոչ միայն մարմնի միջին գծից այս ու այն կողմ, այլ և հետ ու առաջ տանել։ Այդ հետ ու առաջ կատարվող շարժումները հիմանդի բարձրանալու ժամանակի կարող են կոտրված վոսկրի ծայրերը հռուցնել միմյանցից, այդ պատճառով ցանկալի յե դնել նաև յերրորդ շինան՝ գոտկատեղից մինչև կրունկը և չորրորդը՝ սրունքից մինչև փորը։

Կողերը կոտրվելու դեպքում կրծքի հիմանդ մասի վրա դրվում եւ մի քանի շերտ ծալված մարլա կամ այլ փափուկ կտոր և ամուր փափաթվում իրանին։ Փաթաթումը կատարվում է լրիվ արտաշնչման ժամանակ։

## ԶԳՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (растяжения), ՃՄԼՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ՀՈԴԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պինդ առարկաների ներգործությունը կամ անհարմար ընկնելն ամեն անդամ վոսկրի կոտրվածք չի սուաջացնում։ Շատ հաճախ տեղի յե ունենում ամրացնող հողակապի ծղվածություն։ Այդպիսի գեպքերում, սովորաբար, ուժեղ ցավ և զգացվում, նկատվում եւ հողի ուսուցք և նրա շարժունության սահմանափակում։


Զգլածության դեպքում ամենալավ ողնությունը հանդիսանեա վնասված տեղի վրա, ուր, սովորաբար, մի առ ժամանակ անց կարելի յե նկատել արյան լճացման հետքեր, անհրաժեշտ եւ դնել սառուց կամ սառը կոմպրես։

Ավելի ուժեղ ճմլվածքի կամ վերջավորությունների աննորմալ խիստ շարժումները կարող են առաջացնել հոդախտում, վորի ժամանակ յերկու հարևան վոսկրների հողային մակերեսները հեռանում են միմյանցից։ Այդ դեմքում, սովորաբար հողապարկը պատռվում եւ և վոսկրի ծայրը գուրս եւ դալիս ու խրվում շրջապատղ փափուկ հյուսվածքների մեջ։ Հոդախախտման ժամանակ ջարդված հյուսվածքներում միշտ քիչ թե շատ ուժեղ արյունալցում եւ տեղի ունենում։

Հողախախտման նշաններն են՝ սովորական շարժումների անհնարինությունը, հողի արտաքին տեսքի փոփոխությունը (նկ. 47) և ուժեղ ցավի զգացումը։

Հողի ուղղումը բավական բարդ գործ եւ ողահանջում եւ այդ ուղղացիայի տեխնիկայի դիտություն։ Հոդախախտված

վերջավորությունն ուղղելու անշնորհք փորձերի հետևանքով կարող է հոգապարկը ավելի ևս պատռվել, կատերն ավելի ձգվել և ուժեղ արյունհոսություն առաջանած: Այդ պատճառով առաջին ոգնությունը հասցնելիս անհրաժեշտ է ոահմանավակվել, ապահովելով հիվանդ վերջավորության հանդիսան, ամուր վաթաթելով այն և հիվանդ հողի վրա սառը կոմպրեն դնելով:



Նկ. 47. Ռւսի հողի հոգախախտում

Թեր հոգախախտման ժամանակ սովորաբար շորով կապում են վլից, վուքի հոգախախտման դեպքում՝ տուժողը պեսը և հանդիսա պառկի մեջքի վրա: Հոգախախտումն ուղղելու համար հիվանդին անհրաժեշտ է աեղափոխել բուժական հիմնարկ:


### III. ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԱԿՆԿԱԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Շատ հաճախ անշան յերեսութներով սկսվող անակնկար հիվանդությունները կարող են ծանր բարդություններ առաջացնել, նույնիսկ մահ պատճառել, յեթե տուժողին ժամանակին և ճիշտ նախարժշկական ողնություն չի հասցվում: Առաջին

ողնությունն պահանջող հիվանդությունների շարքին են պատճանում հետեւյալները:

### ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ

Ուշաթափությունը կամ անսպասելի կերպով զիստակցության կորցնելը կարող է տեղի ունենալ ուժեղ արյունազեղումից, խիստ ցավերից, ուժեղ ջղային ցնցումից և այլն: Այդպիսի դեպքում ուշաթափվածն անշարժ պառկած է լինում— մաշկը և յերեացող լորձնաթաղանթները արյան առհսումից դեպի ներքին որգանները դունաթափվում են, աչքերի բիբերը նեղանում են, ինչպես խոր քնած ժամանակ, պուլսը թույլ և լինում, խոկյերեմն՝ հաղիվ զդալի, չնչառությունը թույլ և դժվարությամբ է նկատվում:



Նկ. 48. Հիվանդի գիրքը ուշաթափության ժամանակ

Սոուզելու համար, թե կանդ չի առել աբդյոք չնչառությունը, զանազան միջոցների յեն գիրքում: Դրանից ամենագործածելին համարվում է բերանին հայելի մոտեցնելը, նույնիսկ շատ թույլ չնչառության դեպքում, արտաշնչված խոնավ ողից հայելին քրտնում է:

Այդպիսի դեպքերում տառաջին ողնությունը հիվանդին մաքուր և թարմ ող տրամադրելն է: Դրա համար բաց են անում լուսամուտը կամ ողանցքը: Հիվանդին պառկեցնում են այնպես վոր նրա զլուխը վոտներից ցած դանդիր (նկ. 48) և այդ դեպ-

քում՝ արյունը հոսում է դեպի ուղեղը, վորն առանձնապես զգում է նրա պահապությունը։ Մաս հարկածոր և ացձակել հաղուստները (սձիքը, դոտին և այլն)։ Յերբեմն հենց այդ միջացները բավական են լինում։ Պուլսն ավելի լիքն և դառնում, դեմքը վարդադոյն յերանդ և ստանում է մի քանի անդրամ խորը շոնչ քաշելուց հետո հիվանդն ուշքի յե դալիս։

Յեթե ուշաթափակությունն, այնուամենայնիվ, չի անցնում, անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել շնչառությունը վերականցնելու համար, հոտ քաշել տալ նաշատիրի սպիրոի մեջ թաթախած բամբակ կամ, փետուրով խուսուտ անելով քիչ մեջ, փոշոց առաջացնել։ Ավելի ծանր դեղքերում հարկավոր է կատարել արհեստական շնչառություն։

Ուշաթափակությունից հետո հիվանդին ոկտաք և տաք թեյ տալ և հանդիսատ պառկեցնել կես կամ մեկ ժամ, մինչև ուժեղի լրիվ վերականցնումը։

Յեթե խիստ թուլությունը շարունակվում է, հարկավոր և բժիշկ կանչել։

## ԶԵՐՄԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Անզգա դրություն կարող է սկսվել նաև մարմնի խիստ նաշառալուց՝ ջերմահարությունից։ Հիմնականում այդ յերեռոյթի պատճառը մարմնի արտադրած ջերմության չափականց չափուակումն է։ Խիստ տաքացած արտաքին ողում, վորը միաժամանակ հազեցած և լինում ջրային դոլորշների մեծ քանակությամբ, քրածինքի գոլորշիացումը կամ վոչ բավարար թափով և կատարվում կամ իսպատ կանդ և առնում, ջերմության ավելցուկը չի հեռանում և մարմնի ջերմաստիճանը արագ բարձրանում է յերեմն մինչև 40° C։ Դա տեղի յե ունենում, որինակ, չու ժամանակ կամքինեզոնով (կոմբինեզօն) աշխատելիս։

Այդ յերեռոյթի գեմ պայքարելու նպատակով որպանիզմի մեջ ավտոմատիկ կերպով լայնանում են ծայրամասային (периферические) անոթները։ Ակզրում դունատ մաշկը արյան դեպի նա առհոսման հետևանքով ընդունում է կապտակարմիք յերանդ։ Արյան առհոսումից առանձնապես տուժում և նյարդային կենտրոնական համակարգությունը դանդուղելը։ Ջերմահարության յերեռոյթն սկսվում է նրանով, վոր

տուժով թուլություն, վլխացավ և վլխաստույտ ե զգում, ապա այդ յերեռոյթներն արագորեն ուժեղանում են, ականջները դժմում են, կորցնում և հավասարակշռությունը, պուլսը թուլանում է, շնչառությունը՝ արագանում և հիվանդը ջղաձկություններ կատարելով վայր ե ընկնում։ Ծանր դեղքերում մահը վրա յե հասնում անմիջապես։ Արտաքին նշաններն արտահայտվում են դեմքի ուժությունը կապտակարմիք զույնով, մաշկը լինում է տաք և չոր, պուլսը շատ դանդաղ, շնչառությունը հաղիվ նշմարելի։

Քանի վոր այս յերեռոյթի հիմնական պատճառը ուղեղն ու մաշկն արյունով լցվելն է, անհրաժեշտ է՝

1) հիվանդին դուրս բերել թարմ ողը կամ առհաստրակ հևացնել անբարենպաստ միջավայրից։

2) սպառկեցնել նրան գլուխը բարձր պահած դիրքով, վորպեսզի թուլանա արյան հոսանքը դեպի դուխը։

3) արձակել ամբողջ զգեստի կապերը։

4) զլիմին սառը կոմպրես դնել։



Նկ. 49. Հիվանդի դիրքը ջերմահարության ժամանակ

5) ամբողջ մարմինը շփել սառը ջրով կամ վրան ջուր լցնել (Նկ. 49)։

Շնչառությունը կանդ առնելու դեղքում անհրաժեշտ է կերպուել արհեստական շնչառություն։

## ԱՐԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Արհեստական շնչառության գործողությունը լավ հասկանալու համար անհրաժեշտ է դոնե կարճառու կերպով ծանոթանալ մարդու շնչառության առարտին:


Շնչառությունը մեր որգանիզմի ամենակարևոր կենսական ակտերից մեկն է: Շնչառության շնորհիվ մեր մարմնի բջիջները շարունակաբար և անընդհատ թթվածնի նոր բաժիններ են ստանում, վորը խիստ կարեռ է նրանց մեջ կատարվող ռքսիդացման պրոցեսների համար, վերջինի հետևանքով ել առաջանում է այն ջերմությունը, վոր ունի մեր մարմինը (մոտ 37° C): Շնչառության միջոցով որգանիզմից դուրս են գալիս մնասակար զաղանման պրոցեսները (ածխաթթու դադ), վորոնք առաջնում են հյուսվածքների մեջ ռքսիդացման պրոցեսի հետևանքով:

Սառը և կեղոստված ողը քթի միջով բավական յերկար և վոլորապտույտ ճանապարհ գնալով, այնտեղ աղատվում է փոշուց, խոնավանում ու տաքանում և և մաքրված ու քիչ թե շատ կայուն ջերմաստիճանի տակ անցնում և թոքերը: Բերնով շնչելու դեպքում ողը այդպիսի մշակման շի յենթարկվում և լավ չի տաքանում: Դրա համար ել, յեթե քթի վորեւ հիվանդության պատճառով մարդ ստիպված է լինում բերանով շնչել, կոկորդում ինչ վոր սառնություն, չորություն և գրգռվածություն և զգում, վորը հազ և առաջացնում: Այդպիսի շնչառությունը կարող է հետագայում թոքերի հիվանդություն առաջնական դառնությունը:

Քթի միջով անցնելով՝ ողը մտնում է վորկորը, իսկ այնտեղից կոկորդը և շնչափողը, վորը կազմված է ամուր կոճիկներից: Այդ կոճիկային ապարատի ներսում կան լորձնաթաղանթի ծալքեր, վորոնք կոչվում են ձայնալարեր: Այդ լարերն ողի հոսանքի շարժումից փոփոխում են շնչափողի անցքերի լայնությունը, վորի հետևանքով տարբեր բարձրության հնչյուններ են ստացվում:

Շնչափողը կրծոսկրի մակարդակի վրա բաժանվում է յերկու խոշոր բրոնխների՝ թոքերի աջ և ձախ մասերի համար: Հետաղայում այդ յերկու խոշոր բրոնխները ծառի բնի նման ճյուղավորվում են, տալով ավելի ու ավելի մանր բրոնխներ,

մինչև վոր նրանց անցքը հավասարվում է մազի հաստության: Այդ ծայրային բրոնխների վերջավորությունները կարմում են թոքափամփուշտներ, վորոնցից իրապես բաղկացած են մերթոքերը (նկ. 50): Անցնելով բրոնխների միջով՝ ողը, վերջապես, հասնում է թոքափամփուշտներին, ուր և կատարվում է դադարիսանակությունը արյան և ողի միջև:



Նկ. 50. Կոկորդի և թոքերի կազմությունը

Յերակային արյունը (венозная кровь), անցնելով թոքերակալարների մեջ, վորոնք ցանցի ձևով պատռում են թոքամփուշտները, բարակ պատերի միջոցով տալիս և ածխաթթուն, փոխարենը ստանալով հյուսվածքների համար անհրաժեշտ թթվածինը:

Շնչառության ակտը կազմված է յերկու մոմենտից՝ ներշնչումից և արտաշնչումից: Ներշնչման ժամանակ կրծքավանդնությունը կողեւը բարձրացնում են, ստոծանին ցածրադիր մկանները, կողեւը բարձրացնում են, ստոծանին ցածրադիր մկանները, կողեւի պատերի և թոքերի մեջ բաց տարան: Կրծքավանդակի ներսի պատերի և թոքերի մեջ բաց տարան: Արտաշնչում է ստեղծվում: Արտաքին ողն, անցնելով շնչուղիներություն և ստեղծվում: Արտաքին ողն, անցնելով շնչուղիներություն և ստեղծվում:

Արտաշնչումը կատարվում է հակառակ պրոցեսով, կրծքավանդությունը կատարվում է մասնակի պատերի շարժումին, լցնում:

վանդակի միանները թուլանում են և դրանից կողեւն իջնում են: Ստոծանին բնուում է իր նախկին դիրքը, այսինքն, բարձրնուում է, վորի հետևանքով կրծքավանդակի պատերը ճնշում են թռչերը և դուրս են հանուում այնտեղից ողի մի մասը:

Ծնչառության ակտը կատարվում է ավտոմատ ձևով և չէ կախված մարդու կամքից: Ծնչառությունը պահել համարավոր ե միայն  $2-2\frac{1}{2}$  րոպե: Ծնչառության հաճախակիությունը հանդիսանուում սովորաբար մի բոպեյում հավասար է 16-18-ի: Աւելի Փիզիքական աշխատանքի ժամանակ, վաղքի, կամ վորոշ հիվանդությունների դեպքում չնչառությունն ավելի հաճախակի յէ դառնուում, վորոշէնեան մեր մարմնի հրուվածքների բջիջներում ուժեղանուում են ռքսիդացման պրոցեսները, վորի պատճառով ել թթվածնի կարիքն է շատանուում:

Ծնչառության ավտոմատ գործողությունը կարգավորում է զանդուղեղի չնչառության կենտրոնը: Յերբ ուղեղը չափազանց աղքատանում է արյունով կամ, ընդհակառակը, շատ և ուժեղանում արյան հոսանքը դեպի ուղեղը, ինչու նաև զանազան թունավորումների ժամանակ, չնչառության կենտրոնի ճնշումից չնչառությունը կանդ և առնուում (ուշաթափություն, ջերմահարություն, արեահարություն, կազտաթթվով), ածխածնի ոքովով թունավորվելը և այլն):

Արհեստական չնչառության մեթոդները հիմնված են դըրսից չնչառության մեխանիզմը շարժման մեջ դնելու վրա:


Մեխանասարակ և տարածված մեթոդները Սիլվեստրի և Շեֆֆերի մշակած մեթոդներն են:

Համաձայն Սիլվեստրի մեթոդի, տուժածին պառկեցնուում են մեջքի վրա, արձակելով կրծքի ճնշող հաղուստները: Մեջքի տակ դնուում են փոքրիկ բարձ կամ փաթաթած հաղուստները, վորպեսզի կուրծքը բարձր լինի, իսկ գլուխը քիչ հետ ընկած:

Արհեստական չնչառություն գործադրողը չոքում է տուժածի դուսի մոտ և, բռնելով նրա թևերը նախաբաղկի ցածի մասից, բարձրացնուում է նրանց վերև, տանելով դիմի հետեւ: Այդ շարժումից կողերը բարձրանուում են, կրծքավանդակը լայնանուում է և ողը հեշտեցյամբ ներս և մտնուում: Այդպիսով կատարվում է ներշնչում (նկ. 51): Հետեյալ շարժումով թևերը իջեցնուում են և արմունկները սեղմուում հիվանդի կողերին: Արշարվով կրծքավանդակը փոքրանուում է և տեղի յէ ունենուում արտաշնչում (նկ. 52):



Նկ. 51. Արհեստական չնչառություն ըստ Սիլվեստրի (սերշնչում)



Նկ. 52. Արհեստական չնչառություն ըստ Սիլվեստրի (արտաշնչում)


Սիլվեստրի մեթոդը կիրառելիս միշտ անհրաժեշտ է հիշել, վոր մեջքի վրա պառկած և զլուկով հետ դցած դիրքում ծանր չիվանդների լեզուն, մկանների թուլության պատճառով, կարող է հետ ընկնել, այսինքն գնալով դեպի վորկորը, ծածկել կոկորդի անցքը: Այդ պատճառով Սիլվեստրի մեթոդով արհեստական չնչառություն տալու ժամանակ պետք է ողնական ունենալ, վորը թաշկինակալ կոմ այլ կտորով բռնուում է հիվանդի թեղուն: Այդ նույն ողնականը հիվանդի վախելու գելքում, թեղուն է նրա ոլուխը և հետեւում, մոր բերանը մաքրվի վախածի մասնիկներից, վորպեսզի ներշնչման ժամանակ նրանք չընկնեն հիվանդի չնչուղին:

Սիլվեստրի մեթոդը չի կարելի կատարել թհերի վնասված վնելու դեպքում (կոտրվածք, հողախախտում)։



Նկ. 53. Արհեստական շնչառություն ըստ Շեֆֆերի (ներշնչում)

Այլպիսի դեպքում դիմում են Շեֆֆերի մեթոդին, վարը հարմար և նաև նրանով, վոր ողնական չի պահանջում։



Նկ. 53 а. Արհեստական շնչառություն ըստ Շեֆֆերի (արտաշնչում)

Շեֆֆերի մեթոդով հիվանդին պառկեցնում են յերեսի վրա, դլուխը մի կողմ թեքելով։ Հիվանդի այդ դիրքը նրան ապահովում և լեղուն կոկորդն ընկնելուց և փախածը ներս գնալու վտանգից։

Արհեստական շնչառությունը կատարվում է հետեւյալ ձեռվ։ ողնողը «հեծնում ե» հիվանդի վոտների վրա, և յերկու ձեռքերը դնելով նրա կրծքավանդակի ցածի մասի վրա, հիվանդի կուրճքը սեղմում է հատակին կամ գետնին։ Կրծքավանդակին այդ ժամանակ սեղմիում ե ողի մի մասը թոքերից դուրս և

Պատղարակները սովորաբար պատրաստում են ստանդարտ ձևով (նկ. 67), վորպեսզի սանիտարական գնացքից շատավ ողանության կառեթ կամ փոխադրության այլ տեսակների վրա տեղափոխելիս՝ հիվանդին մեկ պատղարակից մյուսի վրա չդընեն, այլ տանեն նրան պատղարակի հետ միասին:




Նկ. 67. Սանիտարական պատղարակ

Ստանդարտ պատղարակը պատրաստվում է 221,5 սմ յերկարություն ունեցող յերկու ձողերից (բրուսայ): Զողերն իրենց հատվածքով քառակուսի յեն: Նրանց ծայրերը միայն կլորացված են և ամելի բարակ են չինուած՝ ձեռքերով բանելու հարմարության համար: Իրենց ծայրերից վոչ հեռու նրանք միացված են միմյանց հետ նեցուկներով, վորոնք մեջտեղում ծալգում են: Նեցուկները հեռացնում են ձողերը միմյանցից 55 սմ, հաշվելով արտաքին կողերից: Ամեն մի ձողի յերկու կողմից ել, կոթերի ծայրերից 55 սմ հեռավորության վրա ամրացված են 11 սմ բարձրությամբ V-աձև վոտքեր շերտավոր յերկաթից:


Զողերի կողերի արտաքին մասին ամրացնում են (արանք կաշի դնելով) բրեղենովի կամ կտամի կտորը 178,5 սմ յերկարությամբ: Նոր տիպի պատղարակների (Տիմոֆեևսկու սիստեմի) կտորի մասերը դեղազացիայի հարմարության նպատակով հանովի յեն լինում: Կտորի յերկու կողերի ծայրին լինում են կտրվածքներ պատղարակին զսպիչ հարմարություններ ամրացնելու համար: Պատղարակի քաշը տատանվում է 9-ից 12 կիլոդրամի մեջ: Սանիտարական ողակում պատղարակները հանձնարարվում են յերրորդ ողակայինին, վորը պետք է լավ տիրապետի պատղարակն արագ ձալելու և բացելու տեխնիկային:




Նկ. 68. Սոճեռն նյութից պատրաստած պատղարակ



Նկ. 68 ա. Սոճեռն նյութից պատրաստած պատղարակ



Նկ. 68 բ. Սոճեռն նյութից պատրաստած պատղարակ



Նկ. 69. Փոկեր պատղարակի համար

Պատղարակի կանոնավոր լինելը ստուգելիս հարկավոր է համոզվել՝ արդյուք լա՞վ են պահպան նեցուկների ամրակները, վորեւ տեղում չի հեռացել կտորը ձողից և կա՞ն կապիչներ, թե՝ վոչ: Պատղարակը բացում են հետեւյալ ձևով: կապիչները քանդում են, ձողերը մի ծայրից հեռացնում են միմյանցից և վորովհետև ձեռքով նեցուկները փակել դժվար ե, ուստի նեցուկների փականին ամրացնում են վոտքով սեղմելով: Նույն ձեռքով վարվում են նաև պատղարակի մյուս ծայրի հետ: Նաև քան հիվանդին պատղարակի վրա դնելն անհրաժեշտ է կրկին անդամ ստուգել՝ լա՞վ են փակված արդյոք նեցուկների փակիչները:

Պատղարակը ծալվում է հակառակ կարգով։ պատղարակը կանգնեցնում են պետնին և վտաքը սեղմելով հեռացնում են ցածի նեցուկնի փակիչը, ապա պատղարակը շուր են տալիս ձախ թեր վրայով և նույնպես վտաքով հեռացնում են մյուս ծայրի նեցուկների փակիչը։ Դրանից հետո ձողերն ամուր մոտեցնում են միջանց, ազատելով կտորը ձողերի սեղմիչներից, ծալում են և կապում կապիչներով։


Զդված ձեռքերով պատղարակ տանելը բավական դժվար է, այդ պատճառով կիրառվում են փոկեր (նկ. 69)։

Վերջին ժամանակներու հիվանդակիների գործը թեթևացնելու համար առաջարկված են մի շարք մեխանիկական հարմարանքներ։ Ամառ ժամանակ պատղարակների կառուցվածքի մեջ մտցնում են մեկ կամ յերկու հեծանիվի անիվ կամ թե չե կիրառվում են իրար միացրած զույգ վելոմեքենաներ, վորոնցով հեշտությամբ կարելի յե տեղափոխել հիվանդին դռավի տարածություն։ Յերկաթուղային տրանսպորտում հիվանդների տեղափոխության համար հարմարեցված են, այսպես կոչված, «ավտոկար»-ներ, վորոնք միանդամից բարձրացնում են չորս տուժածի և շարժվում են ելեքտրական ուժով։ Զմեռը, խորը ձյան միջով տանելու համար, պատղարակը դնում են դահուկների վրա։

Սանիտարական ողակները, բացի նրանից, վոր լավ ծանոթ պիտի լինեն հիվանդների փոխադրության բոլոր հարմարություններին, պետք ե նաև կարողանան առձեռն նյութերից պատղարակ պատրաստել։ Այդպիսի ինքնաշեն պատղարակ պատրաստելու որինակ կարող են ծառայել այստեղ բերված նմուշները (նկ. 68, 68a, 68b)։

## ՀԻՎԱՆԴԻՆ ՊԱՏԳԱՐԱԿԻ ՎՐԱ ՏԵՂԱՎՈՐԵԼԸ


Տուժածներին փոխադրելու գործում ամենակարևոր մոմենտներից մեկն է հանդիսանում հիվանդին բարձրացնելը և պատղարակի վրա դնելը։ Լավ վարժված ողակը կատարում է այդ առանց մեծ ջանք թափելու և առանց հիվանդին անհանդըստություն պատճառելու։ Այդ մանյովրը կատարելու համար ողակը պետք է աշխատի համաձայնեցված ձեռվ, կատարելով իր հրամանատարի կարդաղությունները։



Նկ. 70. Վերցու



Նկ. 71. Բարձրացրու



Նկ. 72. Իջնըրու

Տուժածին անհրաժեշտ ողնությունը հասցնելուց հետո (արյունհոսության կանգնեցում, վերքը կտպելը, շինա դնելը և այլն) ողակի հրամանատարը հրաման է տալիս «Հիվանդի մառ»; Այս հրամանից հետո ողակի յերկրորդ, յերրորդ և չորրորդ համարները տեղավորվում են տուժածի առողջ կողմը: Յերկրորդ համարը կանգնում է զլիի մոտ, յերրորդը՝ իրանի մեջտեղի դիմաց, իսկ չորրորդը վոտների մոտ: Բաց արագ պատղարակը դրվում է տուժածի այն կողմը, վորտեղ վերք կամ մի այլ վնասավածք կա:

«Վերցրու» հրամանով ողակայիններն իջնում են մի ծնկի վրա և ձեռքերը մինչև արմունկները մտցնում են հիվանդի տակը, ըստ վորում՝ յերկրորդ համարը ձեռքերը մտցնում է զլիի և ուսերի տակը, յերրորդը՝ զոտկատեղի և չորրորդը՝ վոտքերի տակը (նկ. 70): «Բարձրացրու» հրամանով յերեքը միասին հիվանդին բարձրացնում և դնում են իրենց ծալված ծնկների վրա (նկ. 71): Այդ դրության մեջ կարելի յե հիվանդին յերկար պահել, յեթե վորեկ պատճառով պատղարակը հնարավոր չե շատ մոտեցնել: Հիվանդին բարձրացնելու ժամանակ ողակի հրամանատարը պատղարակը մոտեցնում է ողակայինների վոտքերին: Ապա «Խօնցրու» հրամանի համաձայն՝ ողակայինները դրուշությամբ հիվանդին դնում են պատղարակի վրա (նկ. 72):

Հետեւյալ հրամանը նպատակ ունի դասավորել ողակայիններին պատղարակի շուրջը: «Տեսկերում» հրամանի համաձայն յերկրորդ համարը կանգնում է տուժածի զլիի կողմը, պատղարակի կոթերի մոտ, չորրորդը՝ վոտների մոտ, իսկ յերրորդն ու առաջինը մնում են պատղարակի կողքերին: Ապա, պատղարակը տանելու համար բոլորն ընդունում են այն ուղղությունը, վոր շույց է տալիս ողակի հրամանատարը:



Նկ. 73. Վերցնել պատղարակը


Համաձայն «Վերցնել պատղարակը» հրամանի չորսը միաժամանակ բարձրացնում են պատղարակը և ըստ «Մարշ» հրամանի սկսում են շարժվել, հետեւելով հրամանատարի ցուցմունքներին (դեպի աջ, դեպի ձախ, ուղղիղ): Ողակայիններն իրենց քայլերը չպետք է համաձայնեցնեն միմյանց հետ, վորպեսի խուսափեն պատղարակի որորվելուց:

## ՊԱՏԳԱՐԱԿՈՎ ՏԱՆԵԼԸ


Դիտակցությունը չկորցրած հիվանդին տեղափոխելիս, յերբ մանհապարհն ուղիղ և գտնվում է թունավոր նյութերով վարակված ոջախի սահմաններից դուրս, այսինքն, յերբ նա հակադարձ չի հագած, ավելի լավ և պահել նրան վոտքերը դեպի առաջ, վորովհետև այդ գեպքում հիվանդը տեսնում է թե ինչ ուղղությամբ ե ընթանում պատղարակը և դա հանդստացուցի: աղջեցություն և ունենում նրա ներվային սխտեմի վրա: Դիտակցությունը կորցրած ծանր հիվանդներին, մանհավանդ թերով վարակված ոջախի պայմաններում, յերբ և՛ հիվանդը, և՛ ողակայինները լինում են հակադարձ, հանձնարարվում ե տանել գլուխը դեպի առաջ բռնած: Այդպես ավելի հարմար է հետեւ հիվանդի վիճակին, վորովհետև նրան միաժամանակ տեսնում են յերեք ողակայիններ (չորրորդ, յերրորդ և առաջին համարները), վորոնք միշտ կարող են նրան ոգնության գալ՝ չնչառության արգելման, փսխումն սկսվելու և այլ գեպքերում: Սարը բարձրանալիս կամ սանդուխքով վեր բարձրանալիս ցանկալի յե պահել հիվանդին գլուխը դեպի առաջ, ըստ վորում պատղարակին ուղիղ դիրք տալու համար առաջի զնայողը շարունակում է պահել պատղարակը ձգված ձեռքերով, իսկ պատղարակի ծայրի մասը բարձրացնում են մեկ կամ յերկու ողակայինների ուղերին (նկ. 74):

Սարից կամ սանդուխքներից ցած իջնելու դեպքում պատղարակին արվում է հակառակ ուղղություն (նկ. 75):


Վոտքերը վնասված լինելու դեպքում (վոսկրի կոտրվածք) հիվանդին պետք է սարը բարձրացնելիս պահել վոտքերը դեպի առաջ, իսկ սարից իջնելիս գլուխը դեպի առաջ:



Նկ. 74. Հիվանդի փոխառումը պատղարակով սանդուխներով դեպի վեր



Նկ. 75. Հիվանդի փոխառումը պատղարակով սանդուխներով դեպի ցած



Նկ. 76. Հիվանդին ոլատղարակով առլրանքատար մեքենայի վրա դնելը

Յեթե հիվանդին հարկավոր և անցկացնել փոսի, ցածր յանկապատի կամ մի այլ խոչնորոտի վրայով, վորից չի կարելի խուսափել, վարվում են հետեւյալ կերպ. մոտենալով խոշնդութին՝ կողքի ողակայինները (առաջին և յերրորդ համարները) պատղարակի առջևի ծայրը առնում են յերկրորդ համարի ձեռքից: Պատղարակից աղատված յերկրորդ համարը կամ իջնում ե փոսը, կամ բարձրանում ե ցանկապատի վրա: Պատղարակը զգուշությամբ տալիս են յերկրորդ համարին: Դրանից հետո առաջին և յերրորդ համարները նույնակես իջնում են փոսը կողման պատղարակի վրա, դրանով իսկ թույլ տակամ բարձրանում ցանկապատի վրա, դրանով կամ ցանկապատի մյուս կողմն, իսկ պատղարակը զգուշությամբ, առաջին և յերրորդ համարների ուժերով փոխառուում ե խոչնորոտի վրայով և համարների ուժերով համարի ձեռքը: Չորրորդ համարն ամբողջ տրվում է յերկրորդ համարի ձեռքը: Չորրորդ համարն ամբողջ ժամանակ պատղարակի իր կողմի ծայրերը պահում ե փոսն անցնելիս ձգված ձեռներով, իսկ ցանկապատն անցնելիս՝ նրա բարձրության մակարդակի վրա: Հենց վոր պատղարակի մեծամասնությունը կամ անցնում է խոչնորոտի վրայով, առաջին և յերրորդ համարները բռնում են պատղարակի հետին ծայրը, աղատելով այդպիսով չորրորդ համարին և համարավորություն տալով նրան անցնել խոչնորոտը: Յերբ չորրորդ համարը խոչնորոտ անցնում է, պատղարակի հետեւ ծայրը տրվում է նրան, իսկ առաջին և յերրորդ համարներն իրենց հերթին անցնում են խոչնորոտը: Պատղարակը սանիտարական յերկանիվ կառքի, ավտոյի (Նկ. 76), տրամվայի վրա դնելիս վարվում են հետեւյալ ձեռն.

1. Պատգարակը բարձրացվում է մինչև հատակի բարձրության մակարդակը և նրա առջեր ծայրերը զրվում ե հատակի վրա:

2. Ազատ մնացած յերկրորդ համարը մտնում է վագոնի կամ յերկանիլ կառքի ներսը և քաշում է պատգարակը, մնացած յերեքը պահում են պատգարակը վագոնի հատակի բարձրության մակարդակի վրա և ողնում են նրա առաջ քաշելուն: Պատգարակը տեղավորելուց հետո նրա ծայրերն ամրացվում են հատկապես դրա համար սարքած ձկաններով, վորպեսի փոխադրության ժամանակ նա տեղից չչարժի: Վաղոնների ներսում պատգարակները յերկու հարկ տեղավորելու դեպքում սկզբում տեղավորվում են վերին հարկի պատգարակները և հետո միայն ներքեւ հարկինը: Դատարկումը կատարվում է հակառակ կարգով:

## VI. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏԱՆԸՆԿԱՌԱՅԻՆ ՊԱՇՏՎԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Բնակելի տան հակառակյին և հակաքիմիական պաշտպանության (ՀԲԲՊ) հիմնական մարմինն ե հանդիսանում ինքնուղաշտպանության խմբակը, վորն սդային հարձակման առաջին խոր բողեներին պետք ե ոգնության հասնի լնակչությանը:

Ինքնապաշտպանության խմբակի մեջ, ինչպես արդեն առաջարկ ե այս գրքի առաջաբանում, մտնում են՝ 1) կազի ողակը, 2) կարգապահական ողակը, 3) հրդեհաշեջ ողակը, 4) քիմիական ողակը և 5) սանիտարական ողակը:

### ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՂԱԿ

Սդային հարձակման հետեանքներն արագ լիկվիդացիայի յենթարկելու գործին պատրաստ լինելու համար ամեն մի տուն գեռ խաղաղ ժամանակ պետք ե նախապատրաստի ինչպես մարդկանց կարգեր, նույնպես և համապատասխան նյութ:

Տան լնակիչների սանիտարական պատրաստման համար հարկավոր ե գիմել նույն ուստոնի կարմիր ներքի և կարմիր կիսալուսի կոմիտեներին՝ հրահանդիք ուղարկելու համար: Ան-

հրաժեշտ է ոժանդակել հրահանդչին հավաքել մոտավորապես քառն կանանցից (տնտեսուհիներից և տնայիլն աշխատավորներից) բաղկացած մի խմբակ՝ «Պատրաստ սանիտարական պաշտպանության» (ՊՍՊ) նորմաները անցնելու համար:

Երբ նրանք ՊՍՊ-ի նորմաները հանձնեն, պետք ե ընտրել Փիզիկապես ամենաառողջ կանանց, վորոնք կարող են քեռնավորված պատգարակը տանել և նրանցից կազմել ինքնապաշտպանության խմբակի սանիտարական ողակը:

Առաջին ողնությունն անհապաղ հասցնելին ապահովելու համար սանիտարական խմբակը պետք ե կազմակերպել յելներով այն հաշվից, վոր 200 բնակչին հասնի 4 մարդ: Մեծ քանակությամբ բնակչություն լինելու դեպքում կազմակերպվամ և սանիտարական ջոկ՝ մի քանի (2-3) ողակներից:

Սանիտարական ողակի, ինչպես նաև առաջին ողնության մյուս ողակների ծախսերը կատարվում են տնային վարչության միջոցներից, ըստ նախահաշվի, վորը հաստատվում է աշխատավորների պատգամավորների տեղական Խորհրդի բնակարանային վարչության կողմից:

Չորս հոգուց կազմված սանիտարական ողակի սարքավորման համար անհրաժեշտ ե ունենալ:

1) Հակագաղ, 4 հատ (բացի դրանից 2-3 հակագաղ ել վորովես պահեստի՝ տուժածների համար),

2) պաշտպանական թիկոնց՝ 4 հատ,

3) սետինե կոչիկներ կամ դուրղաներ՝ 4 զույգ,

4) սետինե ձեռնոցներ՝ 4 զույգ,

5) սանիտարական պայուսակ՝ 1 հատ,

6) պատգարակ՝ 1 հատ,

7) թենոցի նշաններ՝ 4 հատ,

8) ելեկտրական լամպեր՝ 1 հատ,

9) «Զղջիկ» լազուեր՝ 1 հատ,

10) գեղարկղ՝ 1 հատ— ամբողջ տան կամ 1 բնակելի կորուպութիւն համար,

11) ջրի տափածիչ՝ 1 հատ:

Սանիտարական պայուսակի սարքավորումը հետևյալը պետք է լինի:

1) անհատական ծրաբներ՝ 10 հատ,

2) սեղման՝ 3 հատ,

- 3) շինաներ Փաներայից՝ 3 դույզ,
- 4) կտորից չամբար՝ 3 հատ,
- 5) անվտանգ գնդասեղներ՝ 10 հատ,
- 6) 20 սմ. վիրակապեր (ԾԱԿՏ), 5 հատ,
- 7) բամբակ հասարակ՝ 250 դրամ,

- 8) վայուե ձողիկներով բամբակի դնդիկներ՝ 30 հատ կամ 2 հակաքիմիական ծրար,
- 9) նավթ կամ ըենոլին՝ 100 դր.,
- 10) պղնձարջասոլի 5% լուծույթ՝ 100 դր.,
- 11) այգեպանի գանակ՝ 1 հատ,
- 12) 1 դրամանոց յոդի լուծույթի ամպուլաներ՝ 10 հատ,
- 13) նաշատիրի սպիրտ՝ 50 դր.:

Ամեն մի սանիտարական ողակում պետք է տուանձնացնել հրամանատար, վորը պարտավոր և անցնել հատուկ գասընթաց ՀՌՊՊ վարժակայանում և հանձնել «ՊՍՊ» 2-րդ աստիճանի նորմաները:

Այդպիսով կազմակերպված սանիտարական ողակն անհրաժեշտ է վարժեցնել թունավորված վայրում աշխատանք կատարելու համար, ներքրավելով նրան տանը տարվող ՀՌՊՊ-ի բուռուր պարագմունքների մեջ; Ողակի բոլոր մարտիկներին պետք է ծանոթացնել մարտական բոլոր բժշկա-սանիտարական հիմնարկների, զաղապատարանների և այսուղ կատարված աշխատանքների հետ, հերմետիկորեն փակված սենյակների կառուցվածքի հետ:

Հիվանդների հետ վարվելու հմտություն ձեռք բերելու նրանք պատակով անհրաժեշտ է պայմանավորվել մոտակա ամբուլատորիայի հետ և թույլավություն ունենալ ողակայինների (մարտիկների) համար վորպես սանիտարներ հաճախելու (4—5 անգամ) վիրաբուժական բաժինը: Տան մեջ հարկավոր է տուանձնացնել մի փոքրիկ սենյակ, վորտեղ ուետք և պահպեն ողակների սարքավորումները և վորտեղ մարտիկները կարող են անհետաձեռքի ողնություն հացնել տան բնակիչներին խաղաղ ժամանակ (սանիտարական կտրապն տանը):

Ուղային հարձակման հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու համար տան նախապատրաստումը պետք է ընթանա նաև սանիտարական դիրքի կազմակերպման և կահալորման գծով,

յեթե այդպիսին նշված է այդ տան առողջապահական որդանների կողմից:

## ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԻՐՔ

Սանիտարական դիրքը (նկ. 77) հանդիսանում է ԹՆ-ով վարակված վայրից վոչ հեռու գտնվող այն տեղը, ուր ծավալվում են բժշկական մեղամասի չարժական միջոցները՝ 1) չարժական վիրակապական կայան (ՇՎԿ), 2) չարժական լողակայան, 3) ախտահանման սենյակ, 4) լաբորատորիա, 5) բժշկական սանիտարական կոմանդա, և 6) եվակուացիոն-փոխադրական միջոցներ:

Սանիտարական դիրքը կազմակերպում է բժշկական տեղամասի պետը:

Վորպես կանոն, պատրաստված սանիտարական դիրքը կարող է ողտագործվել միայն այն դեպքում, յեթե նա ընկած է ԹՆ-ով վարակված ոչախից դեմքի հաղմաբեր կողմը:

Այդ նպատակով ամբողջ բնակելի համար սանիտարական դիրքերը նշվում են նախորոք, միմյանցից վոչ ավելի քան 400 մետր հիւալորության վրա, շախմատային կարգով: Այլպիսով տարբեր ողերեւութաբանական պայմաններում սանիտարական դիրքերից մեկը միշտ կդանովի հողմաբեր կողմուց և, հետեւապես, կարող է գործել:


Բոլոր սանիտարական դիրքերը համարակալվում են և մտցվում բժշկական տեղամասի պլանի մեջ: Սանիտարական ողակների մարտիկները պետք է իմանան մոտակա սանիտարական դիրքերի դասավորությունը և ողերեւութաբանական պայմանները պարզեցնեն ու ԹՆ-ով վարակված ոչախից ճշտ վորոշելուց հետո բժշկական տեղամասուն հայտնեն տվյալ մոմենտում ընտրած սանիտարական դիրքի համարը, վորպեսզի այն ուղարկվեն բժշկական տեղամասի չարժական միջոցները:

Ամառ ժամանակ հարավային շրջաններում պանիտարական դիրքերի, հատկապես նրանց լողակայանների համար, կարելի յե ողտագործել բաց հարապարակներ (բակ, այգի, ոլուրակ), վորտեղ պատրաստվում են վրաններ կամ դրվում են շիրմաներ:

Փակ սանիտարական դիրքերի համար առաջադրվում են հե-

Պահեստ կից առաջնային պահեստ

Սարքական դեգույնի սամանը



Նկ. 77. Սանկուսարական դեգույն սամանը

տեղայի պահանջները՝ 1) հարմար մուտք փոխադրական միջոցների համար, 2) շենքի ներսում պատճարակների համար հարմար ճանապարհ, 3) յերկու սենյակ առաջին ուղղության կայանի համար և յերեքը միջանցիկ ճանապարհով՝ լողակայանի համար, 4) լողակայանի համար անհրաժեշտ ջուր (ջրմուղ լմակ, ջրհոր կամ ջրով լի մեծ կիսատափակո). :

Սանկուսարական դեգույն բավարձան համար ամենահարմար շենքերն են հանդիսանում՝ կարմիր անկյունները, մեծ շենքերի նախասրահները, կինոների և թատրոնների Փոյմները, վարուսիրանոցները, թեյարանները, ճաշարանները։ Լողակայանի ծավալման համար կարելի յէ ողտագործել կենտրոնական ջեռության շենքերը, անային լիացքատները, նկուղները և նույնական ցախատները։

Սանկուսարական դեգույն յերկու բաժանմունքները կարող են կից լինել, ունենալով առանձին մուտքեր կամ զանվել իրարեց մոտ՝ ապրել շենքերում (նույն հիմնարկի, ձեռնարկի, կամ տան մեջ)։

Առաջին ուղղության կայանի շենքը բաժանվում է յերկու սենյակի: Առաջինում տեղայորվում են մեծ, հերմետիկորեն փակվող արկղ՝ վարակված վերնազգեսար պահելու համար և մի քանի աթոռ կամ նստարան։ յերկրորդում անհրաժեշտ ե ունենալ մեկ-յերկու սեղան, մի քանի աթոռ, լվացարան և դեկարկղ։ Բոլոր անհրաժեշտ դորձիքները, ներառյալ նաև ծալովի վիրակապահան սեղանը և տուժածին խնամելու բոլոր սարքաները բերում ե շարժական վիրակապահան կայանը։

Շատ ավելի բարդ և շարժական լողակայանի պատրաստումը։ Այդ նպատակի համար հատկացված շենքը պետք է առֆաւտել և սարքել ջրատար անցք, սա բաղկացած է լինում յերեք սենյակից։

Առաջին սենյակը ծառայում է կայուն թն-ով տուժածներին ընդունելու համար։ Այսուղ պետք է լինեն հերմետիկորեն փակվող մեծ արկղ՝ վարակված հաղուստը և վոտնամանները պահելու համար և մի քանի նստարան։ Մուտքի մոտ անհրաժեշտ ե ունենալ նախորոք պատրաստված համապատասխան մեծության արկղ, ուր պահվում է ներդ մտնողների վոտնամանները գեղացիացիայի յենթարկելու համար անհրաժեշտ քլորակիրը։

Յերկրորդ սենյակը, վոր հատկապես դուշի համար և, պետք է հազորդակցություն ունենա դրսի հետ (լուսամուտ, ողանցք), բակում գտնվող շարժական դուշի փողակը ներս բերելու համար։ Այստեղ պետք է պատրաստված լինի նաև մի փոքրիկ սեղան և դեղարկղ կայուն թն-ով վնասվածների քիթը, կոկորդը ու աչքերը մաքրելու համար անհրաժեշտ նյութերով։

Յերրորդ սենյակում պետք է դասավորել կահկարասիք (աթոռներ, նստարաններ և այլն), մաքուր հագուստով սպասողների համար։ Այս սենյակը պետք է ունենա առանձին յելք, վորպեսզի դուշով մշակման յենթարկվածները չվերադառնան նույն ճանապարհով, վորով յեկել են։

Բացի բժշկական տեղամասի կողմից կազմակերպված սահմանական դիրքերից, սանիտարական ողակները տան կարմիր անկյունում կամ տնային վարչության դրասենյակում սարքում են մի փոքրիկ սենյակ՝ սանիտարական կայան։ Այս սենյակում պետք է լինի դեղարկղ, տախտ, մեկ-յերկու աթոռ և փոքր սեղան։ Այստեղ կարող ե գտնվել նաև այն պահարանը, ուր պահպան են սանիտարական ողակի ունիցած իրերը։ Խաղաղ ժամանակում այս սենյակում սանիտարական ողակն առաջին ողնությունն ե հասցնում դժբախտ պատահարների դեմքում։ Ողային հարձակման ժամանակ այս սենյակը կարող ե ողակի կողմից ովտարողմիել վորպես անհետաձգելի ողնություն հասցնելու կայան, յեթե թունավոր նյութերով վարակված ոջախը մեծ չի և կարեք չի զգացվում բժշկական կայանից շարժական միջոցներ կանչելու։

25 մարդու հաշվով կազմված սանիտարական կայանի դեղարկղը պետք է ունենա հետեւյալ նյութերը։

- 1) անհատական վիրակապական ծրաբներ՝ 25 հատ,
- 2) ժարլայից կոմպրեսներ՝ 2 կատոց,
- 3) զանազան տեսակի վիրակապեր (բինտ)՝ 10 հատ,
- 4) կոմպրեսի մոմալաթ՝ 1 մետր,
- 5) յոդի լուծույթ՝ 20 դր.,
- 6) անհատական հակաբիոմիական ծրաբներ՝ 10 հատ.
- 7) բամբակով ձողիկներ՝ 50 հատ,
- 8) հիգրոսկոպիկ բամբակ՝ 250 դր.,
- 9) բնեղին՝ 100 դր.,

- 10) պղնձարջասպի 5 տոկոսանի լուծույթ՝ 10 դր.,
- 11) սպիրտ-դենատուրատ՝ 100 դր.,
- 12) կանաչ ոճառ՝ 40 դր.,
- 13) ոճառի սպիրտ՝ 50 դր.,
- 14) նաշատիրի սպիրտ՝ 50 դր.,
- 15) յեթերա-վալերիանային կաթելներ՝ 20 դր.,
- 16) կերակրի սողա՝ 200 դր.,
- 17) բորաթթու՝ 50 դր.,
- 18) կողեյին տարլետկաներով՝ 0,015—12 հատ,
- 19) սլիրամիդոն տարլետկաներով՝ 0,3—12 հատ,
- 20) կալիում սլերմանդանատ՝ բյուրեղներով՝ 5 դր.,
- 21) բորա-վաղելին՝ 30 դր.,
- 22) աչքի պիպետկաներ՝ 5 հատ,
- 23) աչքի վաննաներ՝ 5 հատ,
- 24) մենզուրկաներ՝ 100 դ.-ոց՝ 5 հատ,
- 25) ունտինե սեղմաններ՝ 2 հատ,
- 26) ունտինե ջեռոցներ (գրեկա)՝ 4 հատ,
- 27) տուալետի ոճառ՝ 1 կտոր,
- 28) ոճառաման՝ 1 հատ,
- 29) սրբիչներ՝ 2 հատ,
- 30) մաչալկաներ փափուկ՝ 10 հատ,
- 31) մկրատ՝ 1 հատ։

## VII. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՂԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վորպեսզի մարտիկները ողային հարձակման ժամանակ մանափանդ թն-ով վարակված վայրում աշխատելու ունակություն ձեռք բերեն, անհրաժեշտ ե, վոր ողակը լավ նախապատրաստվի այդ աշխատանքի համար և անընդհատ վարժություններ անի ավայալ վայրում։

Նախապատրաստումը պետք է ընթանա այն ուղղությամբ, վոր մարտիկները վարժվեն հակապաղով, պաշտպանական հագուստով, սանիտարական պայուսակով, պատզարակով ոգտվելու գործին։ Ողակի մարտիկների հատուկ ուշադրությունը պետք է դարձվի հակապաղին տիրապետելու վրա։ Սովորական վարժությունները նորմալ մինուլուսում չեն տալիս հակապաղը հաղնելու ձևի լրիվ պատկերացում։ Սաղալարտի փոքրիկ թի-

քությունը կամ գիմակի վոչ ամուր ձղված փոկերը կնպաստեն արտաքին ողի ներո ծծմանը առանց Փիլտրի, վորը նորմալ մթնոլորտում մնում է աննկատելի: Այդ պատճառով անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ ստուգել ողակի աշխատանքը հակագաղով, ծխով լցված սենյակում, ստիլիկով մարտիկներին՝ մը նաև արտեղ 20—30 րոպե և վարժեցնել նրանց հակազդը փունիլու մեջ:

Ողակի մարտիկները պետք ե կարողանան կանգնեցնել արյունչությունը՝ արագ սեղմել դարձերակները, արագ սեղմաններ դնել, ինչպես նաև կարողանան ամուր և արագ փաթաթաններ դնել մարմնի զանազան մասերի վրա, շնորհեցնել և առանց շնորհել:

Այսին մի մարտիկ պետք ե կարողանա կատարել արհեստական չնչառություն Սիլվեստրի և Շեֆֆերի յեղանակով, տարթթվածին, մաքրել խպրիտի կաթիլները:

Զայած ողակի մարտիկների աշխատանքը խիստ սահմանափառ է և ամեն մեկն ունի իր վորոշ գործը, այնուամենայնիվ նրանք բոլորը պետք ե տիրապետեն առաջին ողնություն հասցնելու տեխնիկային և ծանոթանան առաջին ողնություն հասցնելու ողակում յեղած բոլոր միջոցների հետ:

Բացի յուրաքանչյուր մարտիկի անհատական գործողությունից, ողակը պետք ե վարժություն ձեռք բերի նաև կոլեկտիվ գործողությունների մեջ, այն և. կարողանալ աշխատել պատգարակի հետ ինչպես տուժածին նրա վրա դնելիս, այսպես ել նրան գար ու փոս վայրով փոխադրելիս: Մարտիկները պետք ե կարողանան տարածել, կազմելով «սանիտարական փոցխեր», թունավորված վայրում տուժածներին փնտելու համար, պահպանելով սակայն միմյանց մեջ վորոշ հեռախորություն և աչքից չփողներով միմյանց (տես ստորև):

Ողակի հրամանատարը պետք ե կարողանա կառավարել իր ողակը, տալ բարձր և պարզորշ կարգադրություններ, բաժանել առաջադրանքները մարտիկների մեջ, կազ պահպանել հարման սանիտարական և ինքնապաշտպանության խմբակի այլ ողակների հետ (հրշեջ, քիմիական և այլն), ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել իւ ողակի անհատական և կոլեկտիվ պաշտպանության համար:

Ողակի պատրաստումը (հակազդաքին տիրապետելը, առաջին ողնություն հասցնելը և այլն) պետք ե տարվի բացատրու-

թյան և առանձին գործողությունների գործնական ցուցադրբան հաճապարհով, ապա նաև այդ բոլորի կատարումով մարտիկների իրենց կողմից:

Ամբողջ ողակի գործնական պատրաստումը ՀՈՊ-ի պայմաններում աշխատելու համար պետք ե ընդունակի բոլոր մոմենտները, սկսած «սպառնալից» գրությունը հայտարարելու մոմենտից մինչև «Ավարտի» աղբանշան տալը: Աշխատանքի ամեն մի փուլն իր բոլոր մանրամասնություններով նախորոք պետք ե մտածված լինի հրամանատարի կողմից և գործնականում մշակվի ողակի կողմից իր տան ՀՈՊ-ի պարագմունքների ժամանակ, վորպեսդև մարտիկները ձեռք բերեն անհրաժեշտ ունակություններ:

## ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ „ՍՊԱՌՆԱԼԻՑ ԴՐՈՒՅՑԱՆ“ ՇՐՋԱՆՈՒՄ

Հենց վոր հայտարարվում է «սպառնալից գրություն» սանիտարական ողակի հրամանատարը հավաքում և իր մարտիկներին ողակի հավաքառեղում (սանիտարական կայան):

Ողակի հրամանատարն այդ ժամանակ պարտավոր է ստուգել իր ողակի ամբողջ սարքավորումը, գեղորացքի և վիրակապական նյութերի սովորականը, ինչպես սանիտարական սպառնականը, նույնպես և գեղարկղներում, և լրացնել պական նյութերը: Դրանից հետո սանիտարական ողակն արձակվում և մինչև նոր հավաք «Ռդային տակնապ» աղբանշանի ժամանակ:

«Սպառնալից գրության» ամբողջ ժամանակաշրջանում սանիտարական ողակը մարտիկների հերթական ություն և սահմանում սանիտարական կայանի սենյակում:

Յեթե տան մեջ կտ սանիտարական զիրք և նրան կից լրացիայն, ապա սանիտարական ողակը պարտավոր և հետևել վոր կայանը պատրաստ լինի աշխատանքի անցնելու, այն և անհրաժեշտ կահավորանքին և գեղարկղի գեղորացքի առկայությանը, ինչպես նաև տուշին ողնության կայանների նախապատրաստմանը՝ բժշկական թաղամասի շարժական միջոցները ծավալելու ուղղությամբ:

**ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՅՈՒՆԸ „ՈԴԱՅԻՆ  
ՏԱԳՆԱՄ“ ԱԶԴԱՆՇԱԽԻ ԺԱՄԱՆԱԿ**

«Թղային տագնամը» ազդանշանը լսելուն պես սանիտարական սղակի մարտիկները ոկտոբեր և անմիջապես հավաքվեն նախորդ վարչութեած հավաքատեղը, իրենց հետ ունենալով ամբողջ սարքավորումը (հակադագերը, սանիտարական պայտաւակները, պատգարակները):

Պայտաւակները և պատգարակները կարող են պահպել նաև հավաքատեղում (կամ ՀՈՔՊ-ի գույքի պահեստում): Ինչ վերաբերում է հակադագին, այն պետք է լինի ամեն մի մարտիկի իրեն մոտ, քանի վոր նա յե պատասխանատու նրա ամբողջականության և պահպանման համար: Պաշտպանական հագուստը պահպում է ՀՈՔՊ-ի գոյքի պահեստում:

Յեթե հավաքը տեղի յե ունեցել ողային տագնամի ազդանշանով, վորից հետո կարող ե սկսվել ողային հարձակում, առանց վորեւ մեկի ցուցմունքի սպասելու, լրիվ մարտական պատրաստության բերել իր ողակը: Դրա համար նա պարտավոր ե անց կացնել հետեւյալ միջոցառումները.

1. Ստուգել ողակի բոլոր միջոցների տոկայությունն ու կանոնավոր վիճակը:

2. Կապի ողակի դիտակայանից տեղեկություն ստանալ ողերեւութաբանական պայմանների մասին: Ողակի հրամանատարն ինքը նույնական պետք է կարողանա վորոշել տվյալ վայրի ողորեւութաբանական պայմանները (արտաքին ողի չերժությունը, քամու ուժն ու ուղղությունը): Քամու ուղղությունն իմացվում է տան կտուրին յեղած հողմացույցին կամ դրսում գրած թղթի դրոշակին հետեւելով: Քամու ուժը վորոշվում է հողմաչափով կամ հետեւելով ծառերին, այն ե՝

ա) ծառերի տերևների տատանումը տեղի յե ունենում, յեթե քամու արագությունը մի վայրկյանում հավասար է մեկ մետրի.

բ) միջին ճյուղերի տատանումը ցույց ե տալիս, վոր քամու արագությունը մեկ վայրկյանում հավասար է մոտ յերեք մետրի.

գ) ծառի ամբողջ գաղաթի տատանումը՝ չորս մետրի մեկ վայրկյանում:

Այս դիտումները հնարավորություն են տալիս նախորդ կողմնորոշվել թունավոր նյութի ալիքի հնարավոր ուղղության, ինչպես նաև թունավորված վայրից դուրս գալու և տուժածներին դուրս հանելու ուղղության վերաբերյալ: Յելքը թունավորված ոջախից, վորպես կանոն, ընդունվում է քամու հակառակ ուղղությամբ կամ վորքը ինչ մի կողմ և վոչ մի դիեվում բավարար ուղղությամբ:

3. Ստուգել տան մեջ յեղած դուշի սարքավորման պատրաստ վճելը, այսինքն տաք ջրի առկայությունը:

4. Ստուգել մոտակա սանիտարական դիրքերի պատրաստականությունն ու մատչելիությունը տվյալ ողերեւութաբանական պայմաններում նրանց ոգտագործելու համար:

5. Կազ հաստատել իր բժշկական թաղամասի հետ, հայունելով նրան իր պատրաստականության մասին, ինչպես նաև բժշկական ոգնության ամենամոտիկ ստացիոնար կայանի ուստացիոնար լողակայանի հետ:

6. Սանիտարական ողակի աշխատանքների մեջ ներգրավել տանն ազրող բոլոր այն քաղաքացիներին, վորոնք տվյալ են «Պատրաստ սանիտարական պաշտպանության» նորմաները և ունեն սեփական հակադադար: Այս սեղերին ողնությամբ սանիտարական ողակը, վորպես առաջին ողնության կազմակերպիչ ողային հարձակման հենց առաջին մոմենտից իւկ, կարող է ողնություն հասցնել բոլոր տուժածներին:

Ի նկատի առնելով, վոր ողային տագնամի ազդանշանի և թշնամու ինքնաթիւնների յերեալու միջև ժամանակը կարող է շատ չնչին լինել (յերբեմն 5—10 րոպե), անհրաժեշտ է, վոր հրամանատարն այդ ամբողջ աշխատանքը նախորդ բաշխի ողակի մարտիկների մեջ:

Հավաքատեղը գալուվ՝ ողակի հրամանատարը յերկրորդ ողակայինին հանձնում է պահեստի հակադագը, յերրորդին՝ պատգարակը, չորրորդին՝ լսապերը և պահեստի հակադագը: Ողակի հրամանատարն ինքը նույնական ստուգում է իր սարքավորման վիճակը: Հավաքատեղում ողակն ստանում է պաշտպահական հագուստներ (թիկնոց, ուետինե կոչիկներ և ձեռնոցներ): Հետագայում ողակի անդամները գրավում են իրենց պահակետերը (պօշտ) դոմերի մոտ և հերթապահում են տան սանիտարական կայանում:

Աղաստարանում և սանիտարական կայանում հերթապահներ

ևն նշանակվում ՊՄՊ 1 աստիճանի նշանակիրները, վորոնք Քէ-  
ղիկալիս հնարավորություն չունեն աշխատելու բեռնավորված  
սպատգարակների հետ:

Տուժածներին առաջին ողնություն հասցնելու համար սա-  
նիտարական կայանում պետք է պատրաստված լինեն հետեւյալ  
միջոցները. թթվածնային բարձ, լցված թթվածնով (յեթէ կա),  
կերակրի սողայի 2%-անի լուծույթ և կալիում պերմանդանա-  
տի 1:1000 լուծույթ, ինչպես նաև աչքերը լվանալու և քիթն ու  
կոկորզը վաղողելու գործիքներ: Առաջին նախարժշկական ող-  
նություն հասցնելու համար սանիտարական կայանի ունեցած  
ամբողջ գույքը պետք է պատրաստ լինի ուրիշ տեղ փոխադրե-  
լու համար, յեթէ նա ինքը պատահմամբ գտնվի քիմիալեն վա-  
րակված վայրում: Եեթէ այդ շրջանը վարակվի կայուն թունա-  
վոր նյութերով, ապա սանիտարական կայանի դույքը վա-  
խարժման չի յնթարկի:

Բուլոր պատրաստությունները վերջացնելուց հետո ողակը  
մնում է ծածկված տեղում (առն սանիտարական կայանը),  
կախելով իր տան զռանը կարմիր խաչի գրոշակը, վորպես իր  
պատրաստականության նշան: Այդ պատրաստականության մա-  
սին ողակի հրամանատարը զեկուցում է ինքնապաշտպանության  
խմբակի պետին:

## ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ „ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱԳՆԱՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԴԱՌԱՆՆԻ ԺԿՄԱՆԱԿ

Քիմիական տաղնապի ազդանշանը լինելիս կամ ինքնուրույն  
կերպով թէ հայտաբերելիս ամբողջ ողակը պետք է հակա-  
գաղ հաղնի:

Թունավորված վայրում ողակն սկսում է աշխատել համա-  
ձայն իր հրամանատարի կարգադրության, հաշվի առնելով բո-  
լոր պայմանները և տաղնապի ժամանակ ստացված տվյալները  
(ոգի ջերմաստիճանը, քամու ուղղությունը):

Սանիտարական ողակի բոլոր գործողությունները պետք ե-  
նինեն վարուակի և արագ, վորպեսզի ըուտափույթ ողնություն  
հասցի տուժածներին և արագացի նրանց հեռացումը թու-  
նավորված ոջախից:

Նայած թէ թունավորված ոջախը վորտեղ և առաջացել,

ողակի հրամանատարը կամ պետք է անմիջապես մտնի այդ ո-  
չախը, յեթէ նա գտնվում է իր սպասարկման տերիսորիայում  
կամ, համաձայն ինքնապաշտպանության խմբակի պետք կար-  
դապրության, իր ողակի հետ միասին ուղեսովից ինքնապաշտ-  
պանության հարեան ողակներին ողնելու: Վերջինս թու-  
յատրվում է միայն այն գեղագում, յեթե մոմենտի ողեւե-  
կությանական տվյալներից պարզվում է, վոր իր տան տե-  
րիսորիան դանարում է վատանդից դուրս: Հակառակ գեղագում  
հրամանատարն իր ողակի հետ միասին պարտավոր է ողնել,  
կազմակերպել իր տան բնակիչներին անվտանգ տեղ վտասազե-  
լու գործը և պատրաստ լինել իր տերիսորիայում թունավոր-  
վածներին ողնություն հասցնելու: Հաշվի առնելով թունավոր-  
ված վայրի դիրքը և ողերեւութաբանական պայմանները՝ վերջ-  
նականապես վորոշվում է սանիտարական դիրքի ընտրությունը  
և տուժածներին դուրս բերելու ուղղությունը:

Ողակը թունավորված վայր պետք է մտնի կամ քամու  
ուղղությունով, կամ կողքից: Մտնելով թունավորված վայրը  
և սուուղեղով իրենց հակագաղի կանոնավոր լինելը՝ ողակը  
ցրվում է, այսպես կոչված, «փոցխոի», թնօով վարակված  
տերիսորիան լավ զիտելու համար:

«Փոցխ»-ի ցրվելը կատարվում է հետեւյալ ձեռվ: Էստ  
Հրամանատարի հրամանի ողակայինները շարքի յեն կանգնում,  
ոլանեղով միմյանց մեջ լավ նկատելի տարածություն: Իհարկե:  
նայած տերիսորիայի լուսավորմանը և ուղելքին, ողակայիննե-  
րի միջի այդ տարածությունը միշտ փոփոխության կենթարկ-  
վի՝ մերթ ավելի յերկարանալով, մերթ կարճանալով: Գիշե-  
րը, վատ լուսավորության ժամանակ, ինչպես նաև դանապան  
նյութերով, կամ փլված չենքերի մասերով լցված տերիսորիա-  
յում, ողակայինների միջև յեղած տարածությունները փոքր  
կլինեն, իսկ տափարակ տեղում, ցերեկլա լույսի տակ նրանը  
կարող են զգալիորեն մեծանալ: Ողակայինները պետք է անբնդ-  
հատ հետեւն միմյանց, վորպեսզի ժամանակին նկատեն ընկե-  
րոջ աղդանշանը՝ տուժած մարդ հայտաբերելու մասին:

Ցերեկն աղդանշանը տրվում է ձեռքով, իսկ զիշերը՝ լազ-  
տերով, վորովհետեւ ձայնը հակագաղի միջից կարող է լավ  
լսելի ըլինել:

Սանդուխքների վանդակը հետապոտելու համար առաջարկ-  
վում է առաջ ուղարկել յերկու ողակայինի: Մնացածը դրսում

սպասում են ազգանշանն այդ ընկերներից (վարակես՝ աղդանշան կարող են ծառայել սանդուխքների մետաղյա ճաղաքաբեքն հասցրած համալսակի հարվածները): Պայթյունից հետո սանդուխքների վանդակով բարձրանալիս, ողակայինները պետք է շատ զլուծ լինեն, խուսափելու համար հնարավոր փլամաքներից:

Տուժած մարդ հայտաբերելու մասին ողակայիններից մեկի աղդանշանը լսելիս, ամբողջ ողակը հավաքվում է և անմիջապես անցնում աշխատանքի: Առաջին համարը վորոշում է մնալ վածքի առկայությունը և տուժածին հակագաղ և հազցնում, յերկրորդն ողնում և առաջինին հակագաղ հազցնելու գործում, յերրորդը բաց և անում պատղարակը, չորրորդն ողնում և հրամանատարին վերքը կապել, արյունհոսությունը կանգնեցնել և այլն, իսկ զիշերը լավուերով լուսավորում և ողնությունն հասցնելու վայրը:

Տուժածին ողնություն հասցնելու համար ողակի մարտիկները պետք է լավ վարժվեն մի քանի անհրաժեշտ գործողություններ միաժամանակ կատարելու մեջ: Այդ ունակությունները մշակելու նպատակով անհրաժեշտ է, վոր ողակը դեռ խաղաղ ժամանակ գնի իր առաջ առաջին ողնություն հասցնելու ամենատարրեր կոմբինացիաները և բաժանի անդամների մեջ առանձին գործողությունները: Այսպես, որինակի, յեթե տուժածը դանվում է Փոստենով վարակված ոջախում և նրա կոտրված սրունքից զարկերակային արյունհոսություն և տեղի ունենում, ապա ողակը պետք է հետևյալ ձևով վարդի մինչդեռ յերկրորդ համարը հակագաղն է հազցնում, իսկ յերրորդը բաց և անում պատղարակը, չորրորդն այդ ժամանակ սեղմում է աղդրի զարկերակը, վորով՝ ժամանակավորապես կանգնում է կյանքի համար վտանգավոր արյունհոսությունը. առաջին համարը բաց և անում սանհիստարական պայուսակը և հանում է սեղմանը արյունհոսությունը լրիվ կանգնեցնելու համար: Սեղմանն ամրացնելուց և տուժածին թն-ից մեկուսացնելուց հետո, վիրակապումը կատարվում է վոչ այնքան շտապով: Վերքը կապում են, վերջավորությունները ձգելու միջոցով վոսկորները բերում են նորմալ գրության և շինաներով ամրացնում:

Յեթե տուժածը դանվում է կապտաթթվով վարակված ոջախում, զարկերակային արյունհոսությունն զգալիորեն բար-

շացնում է գրությունը: Հակադաղը հազցնելուց և արյունացնությունը սեղմելով կանգնեցնելուց հետո, պետք է մտածել հիվանդին թն-ով վարակված վայրից անմիջապես հեռացնելու մասին: Տուժածն ամեն բոլե կարող է արհեստական շնչառության կարիք զգալ, վորը հնարավոր չի կատակել հակադաղը հազցրած վիճակում, ինչպես նաև առանց հակադաղի՝ ուռմբի պայթման վայրի մռաերքում, վորտեղ հողը և բեկորները դեռ կարող են թն-ի արտադրել ողի մեջ: Հիվանդին ձեռքերի վրա մաքուր ողի մեջ գուրս բերելը, թեկուզ և վոչ շատ հետու ուռմբի ընկած վայրից, հնարավոր է, վորովհետեւ կապտաթթուն խստ ցնդող է և մեծ տարածություններ չի վարակում: Հեռացնելով հիվանդին մոտ 30—40 քայլ տարածություն, կարելի կլինի նրա վրայից հակագաղը հանելով ստուգել կանգնումով և, յեթե հարկավոր է, զբաղվել նրա վերականգնումով, ինչպես նաև ամրացնել սեղմանը, վերակապը և շինաները:

Յեթե տուժողը դանվում է մաշկի վրա ազդող թն-ի ոջախում և յեթե նրա դեմքի վրա թափել են թունավոր նյութի կաթիլներ, անհրաժեշտ է թն-ի կաթիլները սրբելու, հակագաղ հալցյանելու և վերքը կապելու աշխատանքը բաժանել:

Թն-ով վարակված ոջախում առաջին ողնություն հասցնելու բոլոր գեպքերում անհրաժեշտ շուտափությթ միջոցներն են հանդիսանում տուժածի մեկուսացումը թն-ից և արյունհոսությունը կանգնեցնելը:

Թղակը պետք է առաջին ողնություն հասցնելու վերոհիշյալ որինակների նման աշխատանք տանի նաև այլ թն-ով վարակված պեղքում (գրգուէ, խեղդող), վորպեսզի կողմնորոշման նործողությունների վարժություն ձեռք բերի և բարդ պայտմաններում չչփոթվի:

Վարժեցման աշխատանքները (մարտական գործողություններին մոտեցնելու նպատակով հարկավոր և ողտուել գումավոր աղդանշաններով, որինակի)

ա) վիրավորումը վորոշել վերքի տեղը փոքրիկ շքանաձև կարմիր թուղթ ամրացնելով.

բ) կոտրվածքները նշանակել ու թղթով, իսկ զարկերակային արյունհոսության գեպքում՝ կարմիր թղթի յերկար դաշտով.

շ) անկայուն թն-ով լինող վածքում կանաչ գույնով և

թունակոր նյութի հոտի մատնանշումով, վորպեսզի ողակը վորոշի թն-ի անունը.

դ) կայուն թն-ով վարակված դեպքում տուժածի վրա գնում են զանազան մեծության շրջանաձև դեղին թղթեր, վորոնք ցույց են տալիս կթն-ի կաթիլների մեծությունն ու տեղը: Այդ գույների կոմբինացիայով կարելի յէ նշանակել ամենատարեր վնասվածքները և նրանց միքատերը (միքստ կոչում է միաժամանակ վիրավորումը և թն-ով վնասվելը):

Բացի գրանից ողակը պետք է վարժեցնել արտաքին նշանների հիման վրա դիմուող դնելու մեջ: Այդ նպատակով ցանկալի յէ, վար բացատրազրի մեջ տրվի վոչ թէ վնասվածքի առունը, այլ նշվեն նրան հետեւող արտաքին նշանները, որինակ՝

ա) ջղաձգային հազ, փրփրակալած արյունախառն խորի, սուռող չնչառություն, գեմքի կարմրելը, աչքերի լորձնաթաղանթների կարմրելն ու ուռչելը (քլորպիկրինի և քլորի դեպքում):

բ) տուժածը ուշաթափաված վիճակում ե՝ ջղաձգություններ, գեմքի գույնը վառ-կարմրի, չնչառությունը դանդաղ (կաղաթթվի դեպքում):

գ) ձախ սրունքի ցավ՝ սրունքի ցածի յերրորդ մասում ան-նորմալ շարժողականություն, ուռուցք (սրունքի ցածի յերրորդ մասում փակ կոտրվածքի դեպքում): Յեթե այս նկարագրությացվում ե սև Փոնի վրա կարմիր շրջանաձև թղթով, դա առաջույց է բաց կոտրվածքի, իսկ կարմիր թղթի զոլակը նշան է զարկերակային արյունառության: Վնասվածքի նման բնութագրման միջոցով կարելի յէ ողակի մարտիկներին սովորեցնել դիմուող դնել և ձեռք առնել համապատասխան միջոցառումներ:

Առաջին տուժածին ողնություն ցույց տալու ժամանակ ողակի հրամանատարը պետք է գոնե մոռավորապես վորոշի ամբողջ թունալիրված ոջախում տուժածների թիվը: Նրանցից մի քանիսին կարելի կլինի հենց այդտեղ առաջին ողնություն հասցնել, սեղմանը կապելու միջոցով (սանիտարական պայուսակում, ըստ ցուցակի, գտնվում է յերեք լարան):

Յեթե վարակված ոջախում չատ վնասվածներ կան, ողակի հրամանատարը պարտավոր է միջոցներ ձեռք առնել ուժակություն խնդրելու բժշկական թղթամսսից կամ հարեւանությունից: Իսկ ինքը, վերցնելով իր հետ հակազար ունեցող ակտիվիտաներին, պետք է վերադառնա վարակված վայրը, տուժածներին դուրս հանելու համար:

Թն-ով վարակված վայրի լիկվիդացիայից հետո ողակի հրամանատարը զեկուցազիր և կազմում բժշկական թաղամասի պետին և զեկուցազիմ և ինքնապաշտպանության խթակի պետին՝ կատարած աշխատանքի և ծախաված նյութերի լրացման անհրաժեշտության մասին, վորոշմակի սանիտարական ողակը նորից պատրաստ լինի աշխատելու տմբեն մի մոմենտի, յեթէ ոդային հարձակումը կրկնվի:

Յեթե սանիտարական ողակը կայուն թն-ով վարակված ոջախում աշխատելիս չի ունեցել հակապրիտային հաղուստ, այլ աշխատել և պաշտպանական թիկնոցներով, ապա 10—12 բուղեյից հետո նա պարտավոր և թղղնել աշխատանքը և դնալ լրացման կայան՝ մշակման յենթարկվելու, իսկ ունեցվածքը հանձնել գաղահանման:

Ողակին հարձակման ժամանակ բավական կարենոր և բազմազան աշխատանքների կոմպլեքսը հաջողությամբ կատարելու համար սանիտարական ողակը պետք է վարժվի վոչ միայն մասնակի բնույթ ունեցող խնդիրներ լուծելու, ինչպիսին և տուժածներին ողնություն ցույց տալը, այլ և մի շարք այլ միջոցառումների կիրառման մեջ:

Այդպիսի վարժություն ամենից լավ է անցկացնել խնդիրներ լուծելու միջոցով: Բոլոր խնդիրները պետք է ծավալվեն այն տան տերիտորիայում, վորին սպասարկում և ինքնապաշտպանության խմբակը, վորպեսզի կարելի լինի ուսումնասիրել այդ վայրը հարձակման ժանր պայմաններում (փլվածքների, չրղեհի, մթության դեպքում) և հեշտությամբ կողմնորոշվել ՀՈՊ-ի յուրաքանչյուր հնարավոր պարագայում:

Բերենք մի քանի որինակելի խնդիրներ:

Խնդիր առաջին: Տանից 600 մետր հեռավորության վրա, զեկի հարավ-արևմուտք նետված են մի քանի ավիոուումը ֆուղենով և քլորպիկրինով լցված: Ողի ջերմաստիճանը՝ +15°C, քամու արագությունը մի վայրկյանում հավասար է յերկու մետրի, քամու ուղղությունը հարավ-արևելքից դեպի հյուսիսարևմուտք, ժամանակը՝ առավույան ժամը 7 և 30 րոպե:

Անհրաժեշտ է վորոշել՝ 1) սպասնում և արդյոք վտանգ այն տան տերիտորիային, վորտեղ աշխատանք և սանիտարական ողակը.

2) յեթե վտանգ կա, ապա վորքա՞ն ժամանակից հետո թն-ի ալիքը կհասնի տան տերիտորիային.

3) վո՞ր ուղղությամբ պետք և կազմակերպել ընակիչների գուրս բերելլ և տուժածների փոխադրումը.

4) կարո՞ղ են արդյոք ողակը և 8 հոգի հակագաղ ունեցող պլղի նշանակիրներ տուժածներին ժամանակին ոզնություն հասցնել, յեթե տանը կան 30 մարդ, վորոնք հնարավորություն չունեն հակագաղից ողափելու:

Խնդիր յերկրորդ: Տան տերիտորիայի հարավային մասում ընկել է քիմոռումը, կայուն թշովով լցված: Զերմաստիճանը՝ +22°C, քամու արագությունը՝ վայրի ջանում 4 մետր, քամու ուղղությունը՝ հարավ-արևմուտքից՝ հյուսիս-արևելք: Կան յերեք հոգի վիրավորված և կթնի կաթիներով վնասված սրանցից մեկը ծանր և, ունի ստորին վերջավորության կոռորդածք:

Անհրաժեշտ և վորոշել՝ 1) թունավորված վայրից դուրս գալու ուղղությունը,

2) ո՞ւր ուղարկել կայուն թշնի մթնոլորտում բոլոր գտնը գողներին.

3) ի՞նչ ողնություն և անհրաժեշտ վայրում գտնը վոր վիրավորվածներին.

4) կարո՞ղ ե արդյոք ողակը ասանց լրացուցիչ ողնության կառարել այդ աշխատանքը, յեթե վիրավորներից յերկուսը կարող են ինքնուրույն կեշառվ հասնել լողակայան.

5) գորքա՞ն ժամանակ կարող ե ողակը մնալ վարակված վայրում, յեթե նա ունի միայն սպասողանության թիկնոցներ, ուետինե կոչիկներ և ձեռնոցներ.

6) ո՞ւր պետք ե զնա ողակը թունավորված վայրում աշխատելուց հետո.

7) ո՞ւր ուղարկել ծանր վիրավորվածին:

Խնդիր յերրորդ: Սանիտարական ողակի սպասարկելի տառնից 65 մետր դեպի հարավ-արևմուտք նետված են մի քանի չորսից ավելումքեր և կապտաթթվով լցված ուսմբեր: Արկերն ընկել են հարեւն տան վրա և նրա տերիտորիայում: Առաջացել է հրդեհ: Ողի ջերմաստիճանը՝ +19°C, անհողմություն և կան 10 հոգի ֆուֆորով և տերմիտով այրվածներ, վորոնցից 2-ը ծանր կերպով թունավորված են կապտաթթվով, իսկ 8-ը՝ թեթև:

Անհրաժեշտ և վորոշել. 1) ուղառնում և արդյոք վտանգ այն տանը, վորտեղ գտնվում ե ողակը.

2) վորտեղ պետք և փնտուել վարակված վայրից դուրս գտնու յելք.

3) ի՞նչպե՞ս հանդցնել մարմնի վրա այրվող ֆուֆորի կտորները.

4) կարո՞ղ են արդյոք ողակի աշխատանքների մեջ ներդրակվել հակագաղ ունեցող ակտիվիտեները.

5) ի՞նչ ողնություն և հարկավոր հասցնել կապտաթթվով ծանր թունավորվածներին.

6) կարո՞ղ են արդյոք ողակը և 20 հոգի ակտիվիտեներ կատարել ամբողջ աշխատանքը, յեթե հարեւն տուժած տունն ինքը սանիտարական ողակներ չունի.

7) վորտեղից կանչել ողնություն՝ հարկ յեղած դեղքում:

Խնդիր չորրորդ: Այն նույն տան տերիտորիայի վրա, վորտեղ աշխատում և սանիտարական ողակը, ընկել և աղամմիտով լցված քիմոռումը: Նախքան այդ պայթած ֆուլասի ոռումբի առաջացած պայթյունի ալիքից փշրվել են բակի վրա նայող բոլոր լուսամուտների ապակիները, ողի ջերմաստիճանը՝ +9°C, քամու արագությունը վայրի ջանում 3 մետր, քամու ուղղությունը՝ հյուսիս-արևմուտքից՝ հարավ-արևելք: Վիրավորվածներ չկան. կան 10 հոգի ադամսիսով վնասվածներ:

Անհրաժեշտ և վորոշել. 1) վորտեղ վնտուել վարակված վայրից դուրս գտնու յելքը.

2) ի՞նչպե՞ս պաշտպանել հակագաղ չունեցողներին աղամմիտի գոլորշիները ներշնչելուց.

3) ի՞նչ ողնություն և անհրաժեշտ ցույց տալ տուժածներին:

Խնդիր հինգերրորդ. 19... թվի հունիսի 20-ի ժամը 20-ին Ն բնակելի կայանում տրվել ե սպակին տաղնապի (ՈՅ) աղամնչան: № 35 տան ինքնապաշտպանության խմբակի սանիտարական ողակը, 4 հոգու կազմով, ժամը 20-ից 30 բոպե անց, հավաքվել և տնային կառավարչի գրասենյակում, ունենալով իր հետ հակագաղը: Ողտին ունի՝ 3 սանիտարական պայտասակ, 1 պատագարակ և պաշտպանական հագուստի 4 կոմպլեկտ՝ պաշտպանական թիկնոցներ, ուետինե կոչիկներ և ձեռնոցներ, բացի դրանից կա և 2 պահեստի հակագաղ: Ժամը 20-ից 45 բոպե

անց, տան մեջ տրվում է քիմիական տագնապ (ՔՏ) աղջ անը-  
շան և տեղի յե ունենում քիմուռմբի պայթյուն տան հարավ-  
արեմտյան ուղղությամբ, մոտ 300 մետր հեռավորության վրա:

Անհրաժեշտ է վորոշել. 1) Ի՞նչ աշխատանք պետք է կա-  
տարի սանիտարական ողակը թն-ի աղդանշանից մինչև թն-ի  
աղդանշան ընկած ժամանակաշրջանում.

2) Ի՞նչ վորոշում պետք է ընդունի ողակը այն դեպքում,  
յեթե քամին փչում է տան ուղղությամբ և այն դեպքում, յերբ  
նա փչում է հակառակ ուղղությամբ.

3) Ի՞նչ աշխատանք պետք է կատարի ողակը, յեթե նետած  
ավտոումը լցված լինի դիֆոսդենով, իսկ քամին փչում է այն  
ուղղությամբ, ուր գտնվում է ողակը.

4) Ի՞նչ աշխատանք պետք է կատարի ողակը, յեթե արկը  
լցված է կայուն թն-ով, իսկ քամին փչում է այն տան հակա-  
ռակ ուղղությամբ, ուր գտնվում է ողակը:

Առաջին խնդրի որինակելի լուծումը

1) Թամու ուղղությունը վորոշակի կերպով ցույց է տալիս,  
ուր տան տերիտորիան գտնվում է թունավոր նյութերի ալիքի  
շարժման ճանապարհի վրա:

2) Թն-ի առաջին ալիքները կհասնեն տանը 5 րոպեյից հե-  
տո:

3) Ողի թույլ շարժումը, համեմատաբար վոչ շատ բարձր  
չերժաստիճանի հետ, ցույց է տալիս, վոր թն-ի ուժեղ ցրումը  
չի կարելի սպասել ու, թեև ոռումը բավական հեռու յե ընկած,  
տան տերիտորիայում մնալը վտանգավոր է: Եելքը տան տերի-  
տորիայից հնարավոր է դեպի հյուսիս-արևելք և հարավ-արե-  
մուռք:

4) Եյալես տանը տուժածներ չպետք է լինեն: Խնքնապաշտ-  
պանության խմբակը պետք է հող տանի հակառակով ողտվելու  
հնարավորություն չունեցողներին տեղափորել հերժետիկորեն  
փակվող ունյակներում կամ զաղապատարաններում: Ողակը  
այդ աշխատանքին պետք է դորժոն մասնակցություն ցույց տա:

Յերկրորդ խնդրի որինակելի լուծումը

1) Տվյալ դեպքում վարակված վայրն է հանդիսանում հենց  
տան տերիտորիան: Ողի ջերժաստիճանը, քամու արագությունը  
և նրա ուղղությունը վկայում են այն մասին, վոր տան տերուդի

տերիտորիան շատ շուտով կլցվի կայուն թն-ի գուրզիներով:  
Յելքը թունավորված վայրից հնարավոր է դեպի հյուսիս-ա-  
րևելքում կամ հարավ-արևելք:

2) Թայլել կարողացող վիրավորվածները կարող են ուղարկ-  
վել լողակայան, պատղարակով փոխադրվողներին պետք է շուտ  
հասցնել բժշկական ողնության մոտակա ստացիոնար կայան կամ  
հիվանդանոց:

3) Թունավորված վայրում տուժածներին պետք է հակառակ  
հաղցնել և վերքերը կապել: Թն-ի կաթիլները գեմքի վրա  
թափված լինելու դեպքում հակառակ յաղցնել չե կարելի:  
Մնհրաժեշտ է տուժածներին շնչել տալ հակառակի տուփի մի-  
ջով: Զարդված աղդրի դեպքում, տուժածի վնասված վորքը  
պետք է կապել առողջին: Նրան պետք է գնել պատղարակի  
վրա և հանել թունավորված վայրից:

4) Ողակը թունավորված վայրում կարող է աշխատել վոչ  
ալելի, քան 10—12 րոպե, վորից հետո անմիջապես պիտի դնա-  
լողակայան սանիտարական մշակման համար:

Սանիտարական ողակի համանատարը վարժությունների  
ժամանակ կարող է ինքը նման խնդիրներ կազմել, ամեն ան-  
դամ ի նկատի առնելով իր տան տերիտորիան, վորպեսզի  
մարտիկները մանրամասնորեն ուսումնասիրեն այն, հաստատո-  
րեն իմանան տարբեր վարիանտների ժամանակ ամեն տեսակի  
յելքն ու մուտքը, քամու գերիշխող ուղղությունները և այլն:  
Այս ձեռով վարժված ողակը հեշտությամբ կարող է հասկանալ  
թունավորված վայրի բարդ պայմանները և ժամանակին ձեռք  
առնել բոլոր անհրաժեշտ միջոցները տուժածներին ողնու-  
թյուն ցույց տալու համար: Այս պարապմունքների և վար-  
ժությունների մեջ պետք է լայնորեն ներզրավել տանն ասրուղ  
ՊԱՊ և ՀԱԲՊ բոլոր նշանակիլիքներին:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

<b>Առաջարան</b>	3
I Առաջին ոգմություն վերքեր ստանալու դեպքում	4
Հասկացողություն վերքերի ժամին	4
Հասկացողություն միկրոբների ժամին	9
Հնձանդությունները, վրոպես վերքի վարակման հետևանք	8
Վերքերի պաշտպանումը վարակումից	9
Առաջին ոգնության ծրարը	10
Վերքեր փաթաթելը	15
Արյունաբության դադարեցումը	20
II Առաջին ոգնություն վոսկորները ջարդվելու և կոտրվելու դեպքում	30
Կմախքի կազմությունը	31
Շինաները և նրանց գործադրումը	36
Զգվածություններ, ճմրվածքներ և հոգտախախումներ	39
III. Առաջին ոգնություն անակնկալ հիմանդրությունների դեպքում	40
Աւշաթափություն	41
Զերմահարություն	42
Արհեստական չնչառություն	44
Ցլրվածքներ	49
Վնասվածք և էկուորականությունից	52
IV Առաջին ոգնություն մարտահան քութափոր նյութերով վնասվելու դեպքում	53
Մարտահան թունավոր նյութեր	53
Խեզզող ազդեցություն ունեցող թունավոր նյութեր	54
Առաջին ոգնություն խեզզող ազդեցություն ունեցող թ՛ն-ով վարակվելու դեպքում	57
Գրգռիչ ազդեցություն ունեցող թունավոր նյութեր	63
Ընդհանուր թունավորման հատկություն ունեցող թ՛ն-եր	65
Մաշկա-պալարային ազդեցություն ունեցող թ՛ն-եր	67
Անհատական հակաքիմիական ծրագ	72
V Տուժածների փախադրությունը	76
Տեղափոխում ձեռքերի վրա	77
Պատղամակալ	80

Հեղանդին պատգարակի վրա տեղակորելը	82
Պատգարակով տանելը	85
VI Սանիտարական միջոցառությունը տանը՝ հակառակային պաշտպանության նպատակներով	88
Ամիստարական ողակ	88
Սանիտարական դիրք	91
VII Սանիտարական ողակի գործունեյությանը ոդային հարձակման ժամանակ	95
Սանիտարական ողակի գործունեյությունը «սուպանալից դրություն» ժամանակ	97
Սանիտարական ողակի գործունեյությունը «ոդային տաղնալ» ազդանշանի ժամանակ	98
Սանիտարական ողակի գործունեյությունը «քիմիական տաղնալ» ազդանշանի ժամանակ	100

ՀՀ Ազգային գրադարան



NL0279390

3511